Azg Վազ

12 ԱՊՐԻԼ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 64(4683)

ISSN: 1829-1651

ՀԱԿ-ն այլեւս մամ-մոմ հարցերով չի զբաղվելու՝ պիտի երկիրը փրկի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱԿ-ի ֆեֆին ֆեֆ չի հասնի՝ երեկվանից «զբաղված է անցնցում, անցավ, համաժողովրդական դաշտում Հայաստանի ապագայի կերտմամբ», փոքր-մոքր հարցերով էլ չի շեղվում, փորձում է կանգնեցնել երկրի գահավիժումը, պատասխանում է արդեն ապրիլի 28-ի հանրահավաքին, ու էլ դու սուս. փոքր-մոքրն էլ մնացած ընդդիմադիր միավորներն են, նրանց փոքր-մոքր ղեկավարներին պատասխանելու ժամանակ չկա: Չգիտենք՝ ի՞նչն է այդքան ոգեւորել ՀԱԿ-ի միավոր ՀՀՇ առաջնորդին (Արամ Մանուկյանն էր այսպես պատասխանել Ռուբեն Հակոբյանի ասածը մեկնաբանելու խնդրանքին), արդյո՞ք այն, որ ավելի քիչ մարդ էր եկել ՀԱԿ-ի հանրահավաքին, ու իրենք մանիպուլյացիաներով էին փորձում տպավորություն ստեղծել, թե՞ այն, որ իշխանական դաշտից ինչ-որ հուսադրիչ ազդակներ են ստացել, չգիտենք: Բայց որ ֆեֆներին ֆեֆ չի հասնի՝ ամեն ինչից երեւում է, անգամ հանրահավաքի ժամանակ ղեկավարների ուրախ ժպիտներից եւ լավ տրամադրությունից, ոստիկանության պահվածքից: Իսկ սթափ վերլուծողները մի քանի վանգ արդեն տեսել են Տեր-Պետրոսյանի ելույթում: Նախ այն, որ Տեր-Պետրոսյանն ամեն ինչ անում է՝ ավելի խորացնելու համար պառակտումն ընդդիմադիր դաշտում՝ ոչ մեկին չի ձգում, քայլ չի անում դեպի մյուսները: Վանում է՝ քիչ է, նախապես երրորդ ուժի (կամ մնացյալ բոլոր ընդդիմադիրների ուղղությամբ) ուղղում է բացասական իմպուլսներ: Մանավանդ՝ Հայաստանի չափահաս ընտրողի 1 մլն 800 հազար թվի անվանումը, որպես ընդդիմադիրների պոտենցիալ ընտրազանգված, լավ իմանալով, որ այդ թիվը նախ ռեալ չէ, եւ եղածի կեսն անգամ ընդդիմադիր չէ, շատ լավ իմանալով, որ իր ընտրազանգվածը ամենուին էլ որակյալ ընտրազանգվածը չէ, որի հարցերը ով լուծեց՝ նրա հետեւից էլ գնալու է, եւ անկեղծորեն՝ ոչ մի սթափ մարդ էլ կույր հավաս չի տածում նրա հանդեպ, մի երկու-երեք հազար ակտիվիստից բացի: Հենց անցյալ հանրահավաքին մենք սովորական մարդկանց սթափ վերլուծություններ էինք լսում, թե՝ «եթե սրանք այսպես շարունակեն երկդիմի վարվել՝ հերներն էլ անիծած»: Ընդհանուր առմամբ, երեւում է՝ իշխանություն-ՀԱԿ սեւ-սպիտակ գծի ստեղծումը, որտեղ իշխանությունից ու ՀԱԿ-ից բացի՝ ոչ մեկը չի լինի, սա այն անհրապույր հեռանկարը կլինի, որ կարող է թափվել հայ ընտրողի գլխին:

Տես էջ 2

Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջանում են

Նախատեսվում է նրանց հանդիպումը նաեւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ

Երեկ Երեւան ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ) եւ Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա): Այս անգամ Երեւանից եւ Բաքվից բացի համանախագահները նախատեսում են այցելել նաեւ ԼՂՀ, որտեղ այսօր արդեն նրանց սպասում է նախագահ Բակո Սահակյանը: Մինչ այդ, սակայն, Մինսկի խմբի համանախագահներին կընդունի Սերժ Սարգսյանը, իսկ երեկ երեկոյան Պոպով-Բրադկե-Ֆասիե եռանախագահներին հյուրընկալել է արդեն ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Ինչպես ավելի վաղ հայտնել էր ԵԱՀԿ մամուլի ծառայությունը, համանախագահների այս այցելության նպատակն է «շարունակել քննարկումները բազային սկզբունքների հիման վրա՝ հենվելով Սոչիի հանդիպման արձանագրած դրական տեղաշարժին»: Փաստորեն, մարտի 5-ին Սոչիում կայացած Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպմանը դրական տեղաշարժ են արձանագրել ոչ միայն Մինսկի խմբի համանախագահները, այլեւ Հայաստանն ու Ադրբեջանը: Ավելին, Երեւան ժամանած Շվեյցարիայի նախագահի հետ համատեղ ասուլիսում ՀՀ նախագահը հույս հայտնեց, որ «այս անգամ գոնե «Ադրբեջանի խոսքն ու գործը կհամապատասխանեն իրար», իսկ ավելի վաղ՝ Ծաղկաձորում նախագահ Սարգսյանը նշեց, որ վերջին հանդիպումը Բաքվի դիրքորոշման մեջ արձանագրել է թեկուզ չնչին, բայց տեղաշարժ: ԵԱՀԿ մամուլի ծառայությունը տեղեկացրել էր, որ «քննարկվելու են նաեւ կոնկրետ միջոցառումներ՝ ղարաբաղյան հակամարտության գոտում հրադադարի ռեժիմի խախտումների համատեղ հետաքննության անցկացման՝ կողմերի սանձնած պարտավորությունների իրականացման ուղղությամբ»: Ինչպես արդեն նշել է «**Ազգը**», այս վերջինի իրականացումը անհնար կլինի՝ առանց «համատեղ հետաքննությունում» կոնկրետ ղարաբաղյան կողմին «այս կամ այն ձեւով» ընդգրկելու, թերեւս սրանով է պայմանավորված նաեւ, որ Մինսկի խմբի համանախագահներին այս այցելության ընթացքում ԼՂՀ այցելելուն չեն խանգարի «թեկուզ եղանակային պայմանները»: Ինչ վերաբերում է «հրադադարի ռեժիմի խախտումներին», ապա, ըստ ԼՂՀ-ի ՊԲ-ի օպերատիվ տվյալների, անցած շաբաթվա ընթացքում ադրբեջանական կողմը հրադադարի ռեժիմը խախտել է 260 անգամ: «Ադրբեջանական բանակը այդօրինակ պահվածք է դրսեւորում ոչ միայն վերջին շրջանում շփման գծում մի շարք դիտարկումներից հետո, այլեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի տարածաշրջանային այցի նախաշեմին»: Բնականաբար՝ ադրբեջանական կողմը հրադադարի ռեժիմի մեջ մեղադրում է հայկական կողմին: Իսկ Ադրբեջան, ամենայն հավանականությամբ, Մինսկի խմբի համանախագահները կմտնեն Ղարաբաղից եւ Բաքվում կլինեն ապրիլի 13-14-ը: Ինչպես «Թրենդ»-ին ասել է Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության ղեկավար Էլդար Սաֆիրոլլուն՝ «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչը հաստելու են շփման գիծը եւ այցելելու են Աղդամի շրջանի Օրթա Գարվենդ գյուղ, որտեղ կշարունակեն 9-ամյա Ֆարիզ Բաղալովի մահվան հանգամանքների քննությունը»: Հիշեցնենք՝ ադրբեջանցի երեխայի մահվան մեջ հարեւան երկիրը մեղադրում է հայկական կողմի դիպուկահարներին, սակայն հայկական կողմից վերոհիշյալ բնակավայրում դիպուկահար կրակ փաստացի չի կարող հասնել:

Ի դեպ, այս եւ առհասարակ ադրբեջանական սահմանապահների ծառայության մասին ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները կարող են եզրակացություններ անել անգամ ադրբեջան-իրանական սահմանից եկող տեղեկություններից: Ըստ իրանական «թաբնաֆ.իռ» կայքի՝ Ադրբեջանի սահմանապահ ծառայության աշխատակիցների արձակած կրակից սպանվել է Ադրբեջանի Յարդիմլի շրջանի բնակիչ Ջաֆար Ջաֆարովը, որը փորձել է անցնել Իրանի տարածք: Ավելի վաղ, հիշեցնենք, անցյալ տարվա մայիսի 31-ին, իրանական մեկ այլ՝ «Շոմալ-նյուզ.ռու» կայքը հաղորդեց, որ ադրբեջանցի սահմանապահները սպանել են Իրանի 52-ամյա քաղաքացու, որը ձկնորսություն անելու նպատակով փորձել է անցնել Ադրբեջանի եւ Իրանի միջեւ գտնվող գետը:

Հ. ԱՓՅԱՆ

Փարիզում հայերն ու թուրքերը ոգեկոչեցին Հայոց ցեղասպանության տարելիցը

Կիրակի Ֆրանսիայում ապրող հայերն ու թուրքերը մասնակցել են Փարիզում Կոմիտասի հուշարձանի մոտ տեղի կազմակերպված միջոցառմանը՝ ոգեկոչելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

Փարիզից Ժան Էչիկյանի փոխանցմամբ՝ հիշատակի արարողությունը կրում էր «Collectif Biz Myassine» (Մեզ հետ միասին) խորագիրը:

Հավաքի պաշտոնական հայտարարությունը ստորագրել են գրող Դենիս Դոնիկիյանն ու Կանաչների կուսակցության անդամ Միշել Աթալայը:

Կողմերն ընդգծել են իրենց մեծ ցանկությունը՝ հավերժացնել 2008-ին չորս թուրք մտավորականների նախաձեռնած ներման քարոզարշավն ու կամուրջներ կառուցել հայ եւ թուրք քաղաքացիական հասարակու-

Գբագբոյը ձերբակալվեց

Այս մասին համոզմունք է հայտնում Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով Կոտ դ'Իվուարում Ֆրանսիայի դեսպան Յան-Մարկ Սիմոնին: Վերջինս հայտարարել է, որ երեկ աֆրիկյան այս պետությունում անցյալ տարվա դեկտեմբերին անցկացված նախագահական ընտրություններում հաղթած եւ միջազգային հանրության աջակցությունը վայելող Ալասան Ուաթարայի աջակիցները Աբիջանում ձերբակալել են նախկին նախագահ Լորան Գբագբոյին, որը, չճանաչելով ընտրությունների արդյունքները, հրաժարվում էր զիջել իշխանությունը: Ավելի վաղ, սակայն, նույն ֆրանսիացի դեսպանը, ըստ Ռոյթերի նշել էր, որ Գբագբոյին ձերբակալել են ֆրանսիացի զինվորականները, ավելին՝ France Info-ն տեղեկացրեց, թե Գբագբոյի հետ ձերբակալվել են նաեւ վերջինիս կինը, որդին: Նրանց բոլորին տեղափոխել են Golf հյուրանոց, որտեղ գտնվում է Ուաթարայի կողմնակիցների շտաբը՝ «Ուաթարայի կողմնակիցների շտաբբնակարանը», տեղեկացրել է դեսպանը: Հիշեցնենք՝ ՄԱԿ-ը՝ Ֆրանսիայի «առաջամարտիկությամբ», հիմնվելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1975-ի մարտի 30-ին ընդունած հռչակագրի վրա, իրականացնում է Կոտ դ'Իվուարում ռազմական գործողություններ, «որպեսզի արգելի ծանր հրետանու կիրառումը խաղաղ ազգաբնակչության դեմ»: Բացի սրանից, «Փղոսկրի ափում» գործում է նաեւ ֆրանսիական «Ռնգեղջյուր» ռազմական առաքելությունը, որը ապրիլին համալրվել է մինչեւ 1,7 հազար զինվորականներով: Նշենք նաեւ, որ աֆրիկյան Կոտ դ'Իվուարը նախկինում ֆրանսիական գաղութ էր:

Հ. Ա.

Շվեյցարահայ կազմակերպությունները մերժում են Մայր աթոռ Սբ. Էջմիածնի տնօրինումները

Անցյալ շաբաթավերջին Շվեյցարիայի թեմը վերակազմակերպելու առաջադրանքով Ամենայն հայոց հայրապետի հանձնարարությամբ Ժնեւ էին մեկնել թեմի նորանշանակ տեղապահ Մեսրոպ վարդապետ Պարսամյանը եւ ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը: Ըստ մեր ստացած տեղեկությունների, կիրակի օրը Ժնեւի Սբ Հակոբ եկեղեցում չեն ընդունել Վեհափառ հայրապետի վերոհիշյալ ներկայացուցիչներին եւ փոխարենը Գարեգին Բ կաթողիկոսին մերժողական նամակ են փոխանցել շվեյցարահայ 5 կազմակերպություններից, հաստատելով նախապես Ժնեւի Սբ Հակոբ եկեղեցու խորհրդի կեցվածքը, որով փաստորեն մերժվում է Շվեյցարիայի հայոց թեմ հաստատելու մասին դեռեւս 1992 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի հրամանը, տեղի հոգեւոր հովիվ Աբել քհն Մանուկյանին Մայր աթոռ Սբ Էջմիածին վերադառնալու եւ Մեսրոպ վրդ. Պարսամյանին առաջնորդական տեղապահ նշանակելու մասին Ամենայն հայոց հայրապետի տնօրինումները:

Այսպիսով, ստեղծված տագնապը առավել լուրջ բնույթ է ստանում: Անդրադառնալու ենք:

ԱՄՆ պետքարտուղարությունում էլ արտգրելը ընդունելի՞ է

2010-ի մարդու իրավունքների զեկույցը նույնությամբ կրկնում է 2009-ինը՝ ԼՂ առնչությամբ մի քանի տողով հավելումով

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատահում է, որ Հայաստանից արտերկիր մեկնած ու ինչ-որ ներկայացուցչական հավաքում հանդես եկող մեր քաղաքական այրերն ու երբեմն էլ այդ պաշտոնները զբաղեցնող տիկնայք երբեմն կարող են այնպիսի դիտարկումներ ու հայտարարություններ անել, որոնք որեւէ կերպ չեն տեղավորվում Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքականության հիմնական կողմնորոշումներում: Սակայն այս հարցում հայերս եզակի չենք, անկեղծ ասած, ինչպես շատ այլ հարցերում, չնայած հավակնություններին

ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը, որ հրապարակվել է ապրիլի 8-ին, ներկայացնում է մարդու իրավունքների ոլորտում տարբեր երկրներում, ըստ ԱՄՆ պետքարտուղարության, առկա իրավիճակը, ընդ որում, այդ իրավիճակի գնահատականը տրված է այնպիսի ձեւակերպումներով, որոնք թերեւս նպատակահարմար են գտել օգտագործել ԱՄՆ մոտեցումներին ու դիրքորոշումներին անտեղյակ մարդիկ:

Մասնավորապես, Հայաստանին առնչվող զեկույցում, պետքարտուղարության կայքէջի համաձայն, նշված է. «Ազգությամբ հայ անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակում են վերահսկել Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանն ու այն շրջապատող յոթ ադրբեջանական տարածքները»:

Այս ձեւակերպումները նորություն չեն ու գրեթե նույնությամբ կրկնում են նախորդ զեկույցը, սակայն կրկին, ոչ ավել, ոչ պակաս, անջատողական է որակվում Լեռնային Ղարաբաղը, եւ դա բավարար չէ, դրա հետ մեկտեղ նշվում է, թե «Հայաստանի աջակցությամբ» են վերահսկվում «Ադրբեջանի ԼՂ տարածաշրջանն ու յոթ շրջանները»:

Տես էջ 8

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Համագործակցում են Հայաստանի եւ Չինաստանի իշխող կուսակցությունները

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Չինաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քաղբյուրոյի մշտական անդամ Լի Չանչունի գլխավորած պատվիրակությանը, որը Հայաստան է ժամանել Հայաստանի հանրապետական կուսակցության հրավերով: Այս մասին հայտնում են երկրի ղեկավարի մամուլի գրասենյակից: Ողջունելով հյուրերին՝ նախագահը երկկողմ հարաբերությունների զարգացման տեսանկյունից կարեւորել է բարձր մակարդակի փոխայցելությունները: Հանրապետության ղեկավարն ընդգծել է, որ Չինաստանը միշտ էլ եղել է Հայաստանի հուսալի բարեկամն ու գործընկերը, եւ այդ իսկ պատճառով՝ Չինաստանի հետ հարաբերությունների խորացումը մեր երկրի արտաքին քաղաքականության կարեւոր առաջնահերթություններից է: Նախագահը բարձր է գնահատել տարածաշրջանում Չինաստանի հավասարակշռված քաղաքականությունը եւ ընդգծել, որ ՉԺՀ-ի ներգրավվածության մեծացումը մեր տարածաշրջանում միայն կնպաստի խաղաղության ամրապնդմանն ու սոցիալ-տնտեսական զարգացմանը:

«Մենք շատ ուրախ ենք Ձեր ղեկավարությամբ գործող Հայաստանի Հանրապետական կուսակցության հրավերով Հայաստան այցելելու համար: Այցի նպատակն է՝ նպաստել երկու երկրների եւ նաեւ իշխող կուսակցությունների միջեւ բաղադրական երկխոսության, փոխշահավետ համագործակցության ու հայ-չինական ավանդական բարեկամության զարգացմանը: Հայաստանն ու Չինաստանն ունեն դարավոր պատմություն եւ մարդկության քաղաքակրթության մեջ մեծ ներդրում: Մեր ժողովուրդներին դեռեւս հայրուրամյակներ առաջ միմյանց հետ կապել է մետաքսի ճանապարհը, եւ մենք այսօր ուրախությամբ ենք փաստում, որ հայ-չինական հարաբերությունները զարգանում են ամուր հիմքի վրա եւ մեծ հեռանկար ունեն: Տարածաշրջանում մենք Հայաստանի հանրապետական կուսակցությունը դիտում ենք իբրեւ վստահելի ու կարեւոր գործընկեր», նախագահի հետ հանդիպմանն ասել է Լի Չանչունը: Զրուցակիցները կարեւորել են առեւտրատնտեսական, գիտատեխնիկական, մշակույթի, կրթության եւ մի շարք այլ ոլորտներում փոխշահավետ համագործակցությունը: Նշվել է, որ չինական պատվիրակության կազմում Հայաստան ժամանել մեծ թվով գործարարներ՝ մասնակցելու Երեւանում անցկացվելիք հայ-չինական գործարար համաժողովին, որը նպաստակ ունի նպաստելու գործարար շփումների ակտիվացմանը, ֆինանսական տարբեր ոլորտներում համագործակցության հնարավորությունները:

Անդրադարձ է եղել նաեւ միջկուսակցական հարաբերությունների զարգացմանը: Չինաստանի իշխող կուսակցության ներկայացուցիչը նշել է, որ արդեն 12 տարի Հայաստանի Հանրապետական կուսակցության հետ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը սերտորեն համագործակցում է, ինչը նպաստում է նաեւ երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացմանը:

Հ. Ա.

ՀԱԿ-ն այլեւս մար-մուր հարցերով չի զբաղվելու՝ պիտի երկիրը փրկի

1-ին էջից

Մնում է պարզել, թե ո՞ւմ ձեռք չի տալիս հասկապես բանտարկյալների ազատ արձակումը՝ ՀԱԿ-ի՞ն, թե՞ իշխանությանը: Մենք էլ գլխի չէինք, թե ՀԱԿ առաջնորդը ինչո՞ւ է սաստում գործողությունների դիմելը՝ Ադրբեջա՛նը կօգտվի խառնակությունից եւ պատերազմ կսկսի, նա էլ երկրի մասին է մտածում: Է, բա ջրբաժանի մասին խոսե՞լը, ջրբաժանն ի՞նչ է, ջրբաժանից հետո գործողության դիմելո՞ւ են, եթե այո՝ ապա այդ ժամանակ Ադրբեջանի մասին մոռանալո՞ւ են: ՀԱԿ-ից հեռացած **Կարապետ Ռուբինյանը** համացանցում հիշելով քաղբանտարկյալների ազատման, Ազատության հրապարակի վերադարձման, մարտի 1-ը բացահայտելու տերտերոյանական պահանջները, որոնց կատարման դեմքում միայն երկխոսությունն իշխանության հնարավոր կլինի ընտրությունների վերաբերյալ, հարցնում է. «Ո՞ր, նախագահակա՞ն, թե՞ խորհրդարանական ընտրությունների մասին է հռետորի խոսքը: Պատասխանը, կարծում եմ, ակնհայտ է՝ խորհրդարանական: Ահա եւ եւս մի ապացույց որ ՀԱԿ-ը պատրաստվում է խորհրդարանական ընտրությունների: Կապ չունի՝ հերթական, թե արտահերթ: Կարեւոր է գիտակցել, որ դրանք լինելու են Սերժի նախագահության ներքո՝ այդտեղից բխող բոլոր հետեւանքներով: Ուստի ճշմարտացի էինք, երբ, մասնավորապես, վերաբերմունքը «Ժառանգության» ու Ռաֆֆու հանդեպ բացատրում էինք նախընտրական հովերով», ասում է նա: «Ժառանգության» **Ռուբեն Հակոբյանը**, սակայն, երեկ համոզված էր, որ հենց հերթակա՛ն ընտրություններն են շահեկան եւ ՀԱԿ-ի եւ իշխանությունների համար, քանի որ ՀԱԿ-ն այժմ դեռ որոշ հասարակական աջակցություն ունի, բայց կամաց-կամաց այդ աջակցությունը կարող է կորցնել, իսկ եթե հերթական ընտրություններ լինեն՝ ՀԱԿ-ից կամուֆլյաժը կմնա:

Եթե հենց այստեղ ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովի խոսքը ծեփենք՝ թեման շատ լավ շարունակվում է. Արտահերթ ընտրությունների անցկացման որեւէ անհրաժեշտություն չկա: Կարծում եմ՝ նաեւ ՀԱԿ-ի մեր գործընկերներն էլ շատ լավ հասկանում են, որ արտահերթ ընտրություններ չեն լինելու, որովհետեւ դրա համար պատճառներ չկան: Նրանք պարզապես նման հայտարարություններով ուզում են տաք պահել իրենց ընտրազանգվածը, որ մինչեւ 2012թ. որոշակի ընտրազանգված ունենան»: Սա՝ մեկ, գումարած մի ուրիշ հաթաթա, էլի շարմազանովյան. «Եթե ՀԱԿ-ն իրոք ուզում է Հայաստանի ու ժողովրդավարության կայուն զարգացում, ապա իրեն պետք է տեղեկացնել, որ որեւէ վերջնաժամկետ չի օժանդակում ժողովրդավարական զարգացմանն ու քաղաքական երկխոսությանը», ընդգծել է ՀՀԿ խոսնակը: Իշխանությունները եթե չկասարեն այս պահանջները՝ ապրիլի 28-ը ջրբաժանի օր է լինելու. Տեր-Պետրոսյանի այս մեսիջին ի պատասխան մի ուրիշ ՀՀԿ-ականի՝ ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանի** խոսքն ավելի շուտ ուսերի թոթվոց էր հիշեցնում, թե՝ բա երկխոսությունը սպառված լինելը կամ սկսելն ի՞նչ է նշանակում, ինչի շուրջը. «Իրենց առաջարկած կետերն այնպիսի ժամանակահատվածում են, որ բոլորն էլ օրենքի շրջանակներում լուծելի են», ասել է նա՝ վերապահում անելով մարտի 1-ի սպանությունների բացահայտման մասով, թե իրենք (ՀԱԿ-ականները) պետք է լիազոր մարմնին իրենց բացատրությունները տան տեսածի ու լսածի մասին: Պետության մեղավորության մասը նշելով, Սահակյանը նաեւ ավելացրել է. մեղավորները ընդդիմության հավաքների կազմակերպիչներն են, իրենց բաժին մեղքը որ վերցնեն՝ կբացահայտվի: Սրան ավելացնենք Տեր-Պետրոսյանի ասածը. «Իմ տպավորությամբ՝ իշխանության եւ ընդդիմության միջեւ երկխոսությունը ձեռնտու չէ ոչ միայն ներքին, այլեւ արտաքին որոշ ուժերի, որովհետեւ այն, Հայաստանի իշխանություններին հանելով խոցելի վիճակից, կամրապնդի մեր երկրի դիրքերը միջազգային հարաբերություններում, մասնավորապես, Ղարաբաղյան կարգավորման գործընթացում»: Բան չհասկացանք՝ համ էս ես ասում, համ՝ էն: Հիմա ջրբաժա՞ն է, արտահե՞րթ, թե՞ հերթական ընտրություն է, մենա՞ք եք ուզում վերցնել խորհրդարանի ընդդիմադիր հատվածը ու իշխանությունը թողնո՞ւմ է, ու ամենակարեւորը՝ ջրբաժանից էս կողմ ի՞նչ էր իբր, եւ մյուս կողմում ի՞նչ է լինելու:

Վերնիսաժը կփակվի

Երեկ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանն անդրադարձել է Փ. Բյուզանդի փողոցին հարող Վերնիսաժի տարածքի բարձիթողի վիճակին: Քաղաքապետին զայրացրել է տարածքի ոչ պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակը:

Կարապետյանի դժգոհությանն է արժանացել նաեւ այն փաստը, որ առեւտրականները կանաչ գոտիների եւ շատրվանների հաշվին են իրականացնում առեւտուր:

«Մինչեւ շաբաթ օրը ամբողջությամբ պետք է վերականգնվի կանաչ գոտին եւ արգելվի այդ հատվածում առեւտրի իրականացումը: Վերահսկեք, որպեսզի վարձակալը կատարի բարեկարգման եւ կանաչապատման պայմանագրային պարտավորություններն ու պահպանի այն», հանձնարարել է քաղաքապետը՝ ընդգծելով, որ պայմանագրային պարտավորությունները չկատարող սուբյեկտները օրենքով սահմանված կարգով կարող են ենթարկվել համապատասխան տույժի, ընդհուպ վարձակալության պայմանագրերի դադարեցում:

Իհարկե, քաղաքապետի նախաձեռնությունը դրական է եւ գովելի: Շատ տհաճ է, երբ քաղաքի կենտրոնում՝ Հանրապետության հրապարակի հարեւանությամբ գտնվող այգին հայտվել է նման անմխիթար վիճակում:

Սակայն չպետք է մոռանալ, որ մարդիկ Վերնիսաժում լավ օրից չէ, որ հայտնվել են: Հետեւաբար, քաղաքի այդ հատվածը բարեկարգելուն եւ գեղեցկացնելուն զուգահեռ՝ անհրաժեշտություն կա նաեւ մտորելու, թե առանց աշխատանքի մնացած մի քանի հարյուրյակ մարդիկ որտե՞ղ են աշխատելու:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ

Դավիթ Հարությունյանը ստիպողական գործընթաց է անվանել ԼՂ հարցով ենթահանձնաժողովի ստեղծումը ԵԽԽՎ-ում

Ստրասբուրգում երեկ գումարվել է ԵԽԽՎ գարնանային նստաշրջանը, որտեղ ելույթ է ունեցել Հայաստանի պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը: Նա անդրադարձ է արել 2005 թվականին ստեղծված ԼՂ հարցով ենթահանձնաժողովի՝ ժամանակին կատեցման պատճառներին: Ստեղծվելուց հետո ենթահանձնաժողովը մի քանի ամիսների ընթացքում անկարող է եղել հայ եւ ադրբեջանցի պատվիրակների միջեւ վստահության մթնոլորտ ձեւավորել անգամ: Դ. Հարությունյանն ասել է, որ ենթահանձնաժողովը հենց այս պատճառով էլ չի աշխատել, մի կողմ դրած «Լեռնային Ղարաբաղի բնակչության հետ երկխոսության պահանջը»: Իսկ ենթահանձնաժողովի կատեցումը հենց այդ ձախողմամբ է պայմանավորված եղել եւ ոչ թե լորդ Ռասել Ջոնսթոնի հանկարծահաս մահով, ասել է նա՝ հավելելով, որ հենց այս պատճառների մասին պետք բյուրոյին տեղեկացնելու պարտավորությունը ստանձներ ԵԽԽՎ նախագահը, ինչպես նաեւ՝ հայ եւ ադրբեջանցի պատվիրակների հետ անցկացված խորհրդակցությունների մասին տեղեկացնելը. «Այդ պատճառով հայկական կողմը ենթահանձնաժողովի վերակազմակերպման անկեղծ, անկողմնակալ եւ ազնիվ մղումները հարցականի տակ է դնում»: Ելույթում հայկական պատվիրակության ղեկավարը մեղադրել է ԵԽԽՎ բյուրոյի նախագահին՝ ԼՂ հարցով ենթահանձնաժողովի վերստեղծման որոշման ժամանակ հայկական պատվիրակության ձայնն անտեսելու համար՝ հիշեցնելով, որ բյուրոն «խորհրդավորությամբ կորցրել է հայկական պատվիրակության նամակի հեսքերը եւ աչք ծակող գործելաոճով անտեսել ուղղակիորեն ներգրավված կողմի դիրքորոշումն ու առարկությունները. «Չի կարելի լուրջ դրական արդյունքներ ակնկալել սիստեմաբար առաջադրված գործընթացներից», ասել է Դ. Հարությունյանը՝ հավելելով. «Քանի որ դուք որոշել եք հայկական պատվիրակությունը ներկայացուցիչների առջեւ կկրկնեմ մեր դիրքորոշումը»: Այս տարվա հունվարի 25-ին ԵԽԽՎ բյուրոյին ուղղած նամակում հայկական պատվիրակությունը աղաղակող էր որակել ԼՂ խնդրով ենթահանձնաժողովի վերակենդանացումը, որը երկուսքեմ մեղադրանքների եւ թունոտ հռետորաբանության լրացուցիչ հարթակ կարող է դառնալ: Հիշեցնենք, որ ԵԽԽՎ նախագահ Մովլութ Չավուշօղլուն ամեն կերպ փորձում է վերակենդանացնել այդ ենթահանձնաժողովը:

«Լ. Տեր-Պետրոսյանը պետք է ներողություն խնդրի Արթուր Բաղդասարյանից»

Հայաստանյան ներքաղաքական դաշտը կանգնած է լուրջ վերադասավորումների շեմին:

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս կարծիքը հայտնեց «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը՝ միաժամանակ նշելով, որ նման իրավիճակի սկիզբը դրվեց ՀԱԿ-ի՝ մարտի 17-ի հանրահավաքից ու ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթից հետո: «Դե ֆակտ» ակումբում Ռուբեն Հակոբյանը շեշտեց, որ Հայաստանի առաջին ու ներկայիս նախագահների միջեւ սկսվել է երկխոսություն. «Կարծում եմ՝ Հայ ազգային կոնգրեսի ու իշխանությունների միջեւ նաեւ կա որոշակի պայմանավորվածություն Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններ անցկացնելու վերաբերյալ, ինչը երկու կողմերի համար էլ շահեկան է»: Ինչ վերաբերում է ընդդիմության միավորմանը, Ռուբեն Հակոբյանն ասում է, որ վերջին երեք տարիներին այդ միավորման հիմնական խոչընդոտը եղել են հենց ՀԱԿ-ն ու իր առաջնորդը:

Այնուհետեւ բանախոսն անդրադարձավ ՀԱԿ-ի ապրիլի 8-ի հանրահավաքին, որտեղ ասվել է, որ պետության մեջ չպետք է լինեն ցնցումներ, քանի որ ներքաղաքական լարվածությունից կարող է օգտվել Ադրբեջանն ու հարձակում գործել Լեռնային Ղարաբաղի վրա. «Սրանից հետո հարց է առաջանում, երբ 2008-ի փետրվարին կազմալուծվել էր հանրապետության կենսագործունեությունը, եւ հսկայ էր, որ որեւէ բախումի դեպքում Ադրբեջանը կարող էր օգտվել իրավիճակից, այդ պահին Լեւոն Տեր-Պետրոսյանը չունե՞ր վերոնշյալ մտահոգությունը»: Ռուբեն Հակոբյանը նաեւ կարծում է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը պետք է ներողություն խնդրի ՕԵԿ-ի նախագահ Արթուր Բաղդասարյանից, իսկ ներողություն խնդրելու պատճառը հետեւյալն է. «Արթուր Բաղդասարյանն իշխանությունների հետ գնաց երկխոսության, սակայն անվանվեց դավաճան, Լեւոն Տեր-Պետրոսյանը նույն բանն արեց 3 տարի անց ու 10 զոհերից հետո»: Ինչեւէ, Ռուբեն Հակոբյանի խոսքով՝ ընդդիմադիր դաշտում սպասվում են լուրջ տեղաշարժեր, միեւնույն ժամանակ առաջացել է քաղաքական պահանջ, որպեսզի ընդդիմադիր դաշտը համախմբվի ու հակակշռի իշխանություն-Լեւոն Տեր-Պետրոսյան այլանսին:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Ազգություն

Վանաձորում բացվեց Արմենական-ՌԱԿ մարզային գրասենյակը

Ապրիլի 9-ին արմենականները կրկին Լոռու մարզում էին: Այս անգամ նրանք հավաքվել էին Վանաձորի կենտրոնական պողոտայում, որի Տիգրան Մեծի 44գ հասցեում շաբաթ օրը կուսակցական ընկերների, համակիրների ու գործընկերների ներկայությամբ բացվեց Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) մարզային գրասենյակը:

Մինչ բացման արարողությունը Արմենական-ՌԱԿ ատենապետ **Հակոբ Ավետիքյանն** իր խոսքում նշեց. «Սա չի լինելու միայն կուսակցական գրասենյակ, այլեւ լինելու է մտավորականների հանդիպումների, քննարկումների ու մշակութային միջոցառումների կենտրոն»: Պարոն Ավետիքյանի ասածի ապացույցը գրասենյակում հենց շաբաթ օրը բացված ցուցահանդեսն էր, որը կրում էր «Ապրի՛ր, որ հիշես» խորագիրը: Ցուցադրվում էին հայ ու միջազգային երգիծանկարչության նմուշները՝ Հայոց ցեղասպանության թեմատիկայով: Երգիծանկարները, որոնք ցույց են տալիս թուրք բռնակալների վայրագությունները հայերի հանդեպ, 1885-1915 թվականներին տպագրվել են հայկական ու եվրոպական տարբեր պարբերականներում: Դրանց հեղինակները գերմանացի, ռուս, իտալացի ու հայ նկարիչներն են: Ցուցադրվող նկարները տարիների ընթացքում հավաքել է հայտնի երգիծանկարիչ Սուքիաս Թորոսյանի որդին՝ նկարիչ Արսեն Թորոսյանը: Սրան անցյալ տարի «**Ազգը**» հանգամանալից անդրադարձել է: Կուսակցության շրջանային գրասենյակում մշակութային միջոցառում կազմակերպվել էր առաջին, սակայն ոչ վերջին անգամ:

Այնուհետեւ նորաբաց գրասենյակում գումարվեց Արմենական-ՌԱԿ մարզային նիստը, որը վարում էր կուսակցության փոխատենապետ **Արմեն Մանվելյանը**: Նիստի ընթացքում ձեւավորվեցին Լոռու մարզի շրջանակն ու շրջանային վարչությունը: Ըստ Հակոբ Ավետիքյանի՝ կուսակցության կանոնադրության համաձայն, եթե մի մարզում կուսակցությունն ունի 3 եւ ավելի ակումբներ, ապա դրանք պետք է ունենան շրջանային վարչություն, որի միջոցով ակումբները կկարողանան շաղկապվել միմյանց: Արմենականները Լոռիում գործող 5 ակումբներ ունեն, որոնցից 3-ը՝ «Վանաձոր», «Գուգարք», «Բարունակ Թովմասյան» ակումբները, գտնվում են Վանաձորում, իսկ «Ստեփանավան» ու «Սպիտակ» ակումբները՝ համապատասխան քաղաքներում:

Արմենական-ՌԱԿ հանրապետական վարչության անդամ **Գայանե Մուրադյանի** խոսքով՝ կուսակցությունը Լոռիում ավելի քան 150 անդամներ ունի. «Եվ մեր նպատակն է շրջանային գրասենյակի ու վարչության միջոցով այստեղ բերել նաեւ մշակութային կյանք, ինչի կարիքն ու պահանջը կա մարզում»:

Այնուհետեւ բաց քվեարկությամբ ակումբների անդամներից ու ատենապետներից ընտրվեցին շրջանային վարչության 9 անդամները: Կուսակցության ավանդույթների համաձայն տեղի ունեցավ վարչության նորընտիր անդամների երդմնակալությունը: Քանի որ կուսակցությունը մարզում նաեւ նորագիրներ ուներ, ապա ընդունվեց նաեւ 11 նորագիրների երդման ուխտը:

Շաբաթ օրը Վանաձորում էին նաեւ Միացյալ Նահանգների արեւելյան շրջանի ՌԱԿ համապատասխան , բարերար **Բաբկեն Մկրյանը**, որը եկել էր Ֆիլադելֆիայից, եւ ՌԱԿ համաշխարհային խորհրդի գործադիր մարմնի անդամ, Փարիզում լույս տեսնող «Europe et Orient» («Եվրոպա ու Արեւելք») հանդեսի գլխավոր խմբագիր **Վարուժան Սիրապյանը**: Պարոն Մկրյանը կուսակցության անդամներին շնորհավորեց գրասենյակի բացման առիթով, մաղթեց հաջողություններ՝ միաժամանակ նշելով. «Մեզ համար հպարտանք է, որ Արմենական-ՌԱԿ-ը աճում եւ ընդլայնվում է»:

Իսկ **Վարուժան Սիրապյանը**, օգտագործելով պատեհ պահը, լոռեցիներին տեղեկացրեց, որ Ֆրանսիայում Արշակ Չոպանյանի անվան ինստիտուտը Հովհաննես Թումանյանի գործերը հրատարակելու է ֆրանսերեն. «Մեր նպատակն է ամբողջ աշխարհին ցույց տալ Թումանյանի արվեստը»: Մեծանուն լոռեցու ստեղծագործությունները ֆրանսերեն տպագրվելու են Վարուժան Սիրապյանի ջանքերով, սեպտեմբերին Երեւանում կլինի դրանց շնորհանդեսը: Իսկ Հ. Ավետիքյանը առաջարկեց, որ այդ առիթով միջոցառում կազմակերպվի նաեւ Թումանյանի ծննդավայրում:

Վանաձորում մարզային նիստին ներկա էին նաեւ Արմենական-ՌԱԿ կենտրոնական վարչության անդամ, պատմաբան **Սուրեն Սարգսյանը**, «Մասիս» ակումբի ատենապետ **Սուսաննա Ղազարյանը** եւ ուրիշներ:

Նիստի ժամանակ Արմենական-ՌԱԿ ատենապետը նշեց, որ Լոռվա շրջանակի ձեւավորումը կուսակցության կարեւոր քայլերից էր. «Ինչ վերաբերում է եկող տարի կայանալիք խորհրդարանական ընտրություններին, ապա մեր կուսակցությունն այդ ընտրություններին անպայման մասնակցելու է»:

Այնուհետեւ գումարվեց շրջանային վարչության փակ ժողովը, եւ կապարվեց վարչության դիվանի ընտրությունը: Վարչության ատենապետ ընտրվեց «Վանաձոր» ակումբի ատենապետ **Սեյրան Ղարիբյանը**, իսկ փոխատենապետ՝ **Կարինե Մհերյանը**: **Անի Ժամհարյանն** ընտրվեց ատենադպիր, իսկ **Նարինե Կոռյանը**՝ գանձապահ:

Լոռիում արմենականների հագեցած օրը, սակայն, չէր սահմանափակվում միայն գրասենյակի բացումով կամ մարզի շրջանակի ստեղծումով: Արմենականները Վանաձորում էին նաեւ բարեգործական նպատակներով. «Զարթել Եսայան» կանանց ակումբը «Խաղալիքներ երեխաներին» ծրագրի շրջանակներում խաղալիքներ նվիրեց քաղաքի մանկատան երեխաներին: Գայանե Մուրադյանը պատմեց, որ խաղալիքները հավաքել են կուսակցության անդամների երեխաները, նաեւ Նոր Նորքի հայորդաց տան եւ Վանաձորի հայորդաց տան սաները: Արմենականները մշտապես իրենց ուշադրության կենտրոնում են պահում մարզերի ու գյուղական համայնքների բնակչության խնդիրները, ինչը եւս մեկ անգամ փաստում է նրանց շաբաթ օրվա այցելությունը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վանաձոր-Երեւան

«Երկիր»-ի դեմ դատը հետաձգվեց

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի՝ «Երկիր» օրաթերթի դեմ հայցով երկրորդ դատական նիստը տեւեց ընդամենը մի քանի րոպե: Պատասխանող կողմը դատարան գալու ճանապարհին հայտնվել էր ավտոխցանման մեջ եւ ուշացել դատից: Դատական նիստը հետաձգվեց, այն տեղի կունենա ապրիլի 21-ին: Հիշեցնենք, որ օրաթերթը հունվարի 12-ին «131 դեմք եւ դիմակ» խորագրի ներքո անդրադարձել էր ՀՀ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանին: Թերթը գրել էր, որ Արզաքանցյանը խորհրդարանում աչքի է ընկնում որպես «սիլլագ», շարունակ գլուխ է գովում, թե ինքնաթիռներով գեղեցկուհիների է բերում-տանում, հայտնի է որպես խաղատների մշտական հաճախորդ, շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի, իսկ ամեն անգամ ծեծվելուց հետո ամիսներով բուժվում է եւ չի հաճախում ԱԺ նիստերին, խոսում է... մի քանի օսար լեզուներով, բայց առավել հասկանալի խոսում է հայրենի Քյավառա բարբառով:

Պատգամավորի կարծիքով՝ հոդվածում հրապարակվածը պարունակում է վիրավորանք եւ զրպարտություն, ինչը արտավորում է իր պատիվն ու արժանապատվությունը: Արզաքանցյանը դիմել է դատարան՝ պահանջելով «Երկիր» օրաթերթից բռնագանձել 3.000.000 դրամ գումար, ինչպես նաեւ 568.000 դրամ՝ փաստաբանական եւ դատական ծախսերի համար:

Հ. Հ.

ՀԻՇԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ՀԱՄԱՐ ԽԱՉՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

Ուղերձ աշխարհի քրիստոնյա եկեղեցիներին

Ջերդ Սրբություն Հռոմի պապ Բենեդիկտոս XVI
Ջերդ Ամենասրբություն տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս I
Ջերդ Սրբություն Ղպտի եկեղեցու պատրիարք Շենուդա III
Ջերդ Սրբություն Անտիոքի եւ համայն Արեւելքի սիրիական ուղղափառ պատրիարք Զաքքա I Իվաս
Ջերդ Սրբություն Հնդիկ Մալանկարա եկեղեցու պատրիարք Վասիլիոս Դիդիմոս I
Ջերդ Սրբություն Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ I
Ջերդ Սրբություն կաթողիկոս - պատրիարք համայն Վրաստանի Իլյա II
Ջերդ Սրբություն Եթովպական եկեղեցու պատրիարք Աբունա Պաուլոս
Ջերդ Սրբություն Ռումինիայի ուղղափառ եկեղեցու պատրիարք Դանիել
Ջերդ Ամենապատվություն Աթենքի եւ Հունաստանի արքեպիսկոպոս Հերոնիմոս II
Ջերդ Ամենապատվություն Կիպրոսի ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոս Քրիստոսդոմոս II
Ջերդ Սրբազնություն Անգլիկան եկեղեցու առաջնորդ Քենթերբերիի արքեպիսկոպոս Ռոուան Վիլյամս
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Օլաֆ Ֆյուկսե Թվեյթ
Ջերդ Ամենապատվություն Լեհաստանի ուղղափառ եկեղեցու պետ, Վարշավայի մետրոպոլիտ Սավա
Ջերդ Սրբություն Սերբիայի ուղղափառ եկեղեցու Բելգրադի մետրոպոլիտ պատրիարք Իրինիոս
Ջերդ Ամենապատվություն Ալբանիայի ուղղափառ եկեղեցու պետ արքեպիսկոպոս Անաստասիոս
Ջերդ Ամենապատվություն Երուսաղեմի եւ համայն Պաղեստինի պատրիարք Թեոֆիլոս III

Ողջ քրիստոնյա աշխարհը շուտով տոնելու է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարությունը: Հայտնի է, որ քրիստոնյա բոլոր եկեղեցիների տոները իրենց հիմքում որեւէ էլ նույնական, ունեն տոմարական որոշ տարբերություն: Այս տարի խորհրդանշական մի զուգադիպությամբ քրիստոնեական հաղթական տոնը՝ Քրիստոսի Հարությունը, ողջ խաչապաշտ աշխարհը տոնելու է նույն օրը՝ ապրիլի 24-ին: Մեզ՝ Քրիստոսի առաքյալներ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի աստվածաշնորհ քարոզչությամբ քրիստոնեացած հայերիս համար, Հրաշափառ Հարությունը համընկնում է եւս մի կարեւոր օրվա հետ, որը, սակայն, ի տարբերություն կրոնական տոնի, մեր ազգային ցավի ու վշտի օրն է՝ հայ ժողովրդի ամենամեծ կորուստի՝ մեկուկես միլիոն հայերի եղեռնման եւ հիշատակի օրը: 1915 թվականին թուրքական կառավարության սանձազերծած այդ ցեղասպանությունը շարունակությունն ու գագաթնակետն էր Հայաստանի նկատմամբ դարեր շարունակ վարած հակաքրիստոնեական քաղաքականության: Հայոց զոհերից շատերին թուրք զինվորները խաչել են տեղահանության երկար ճանապարհին՝ Դեր Զորի անապատում: Մեր խաչված ժողովուրդը, սակայն, կորստյան չմատնվեց, այլ Քրիստոսի պես հարություն առավ ու ապրեց:

Ներկայիս թուրքական կառավարությունը, չընդունելով 96 տարի առաջ իր նախնիների կատարած դատապարտելի արարքը, մասնակիցն է դառնում հայ ժողովրդի ցեղասպանության:

Բազմաթիվ երկրների աշխարհիկ իշխանություններն իրենց աստվածահաճո վերաբերմունքն արդեն դրսեւորել են՝ ընդունելով Հայոց ցեղասպանությունը, որի ականատեսներից ոմանք դեռեւս ողջ են: Ժամանակն է, որ աշխարհի հոգեւոր իշխանությունները եւս ասեն իրենց խոսքը ապրիլի 24-ին՝ Քրիստոսի Սուրբ Հարության պատարագի ժամանակ, հիշատակելով Քրիստոսի խաչի հավատարմության համար խաչված մեկուկես միլիոն հայերին:

Հայ առաքելական
սուրբ եկեղեցու հետեւորդ՝
ՌՈՔԻԷԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ուխտագնացություն դեպի Կաղիս

Իսպանական պատմական աղբյուրների համաձայն, 17-րդ դարում հայ վաճառականները Զուղայից եւ մահմեդական երկրներից հաստատվել են Կադիսում ու Իսպանիայում ստեղծել առաջին հայ համայնքը: Իսպանիայում եւ Պորտուգալիայում հայրապետական պատվիրակի ընդհանուր փոխանորդ, ծայրագույն վարդապետ Սասուն Զմրուխտյանից տեղեկացանք, որ մայիսի 1-ին Անդալուզիայի, Մալագայի ու Սեւիլիայի շրջանների Հայ առաքելական եկեղեցու ծխական վարչությունները դեպի Կադիս կազմակերպելու են ուխտագնացություն: Ուխտավորներն աղոթելու են Կադիսի այն եկեղեցում, որտեղ աղոթել են հայկական համայնքի առաջին անդամները:

Ի. Պ.

«Լիբանանի Հանրապետության Նախագահական գրահ» շքանշան Ռալֆ Յիրիկյանին

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, Լիբանանի Հանրապետության նախագահ գեներալ Միշել Սուլեյմանը, «գործարարության ու գործարար կառավարման բնագավառներում արձանագրած բացառիկ հաջողությունների, հատկապես գործարարությանը մարդկային ընդգծված դիմագծի հաղորդման, կառավարման նոր մշակույթ ներդնելու եւ զարգացնելու գործում ունեցած նշանակալի ավանդի, Լիբանան-Հայաստան բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործին բերած մասնակցության, ինչպես նաեւ Հայաստանում լիբանանյան համայնքին մատուցած ծառայությունների համար» «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին շնորհել է «Լիբանանի Հանրապետության Նախագահական գրահ» շքանշանը:

Ա. Մ.

Տեսակետներ

Արգենտինայի արդարադատության որոշումը նախադեպ՝ ցեղասպանություն որակելով Թուրքիայում 1915-ից 1923 թթ. հայերի զանգվածային կոտորածները

Պատմական պահ է: Եվ պատահական չէ, որ Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսն է այս անցքի հիմնական բեմահարթակը, իսկ որպես արդարության պահանջատեր առանցքային դերակատարներ՝ «Հայրապետյան» հաստատությունը, հայ համայնքի հաստատություններն ու բազմաթիվ կանայք եւ տղամարդիկ, որ իրենց համերաշխությամբ մեծապես նպաստել են այս պատմական փաստին:

2011 թվականի ապրիլի 1-ն ընդմիշտ գրանցված կմնա մեր հիշողություններում, երկրի պատմության մեջ ընդհանրապես եւ հայ համայնքի՝ մասնավորապես, քանզի տեղական ժամանակով ժամը 13:30 «Կոմոդորո Պի» Արդարադատության պալատի (տիբունալես) «Ա» դահլիճում դատավոր Նորբերտո Օյարբիդեն ներկայացավ հրապարակայնորեն հայտարարելու իր եզրակացությունը, որին հանգել էր ավելի քան մեկ տասնամյակ տեւած դատական մանրակրկիտ, բազմակողմանի հետաքննությունից հետո:

Երբ իր վերջին օրերն էր ապրում 20-րդ դարը, իրավաբան **Գրեգորիո Հայրապետյանն** ու նրա ընտանիքը Արգենտինայի արդարադատության առջեւ հայց էին հարուցում ընդդեմ Թուրքիայի կառավարության՝ պահանջելով հայտնել, թե ինչ է պատահել իրենց նախնիներին, որոնք դարասկզբին բռնի տեղահանվել են իրենց պապենական հողից, ախորժվել, ու այլեւս ոչինչ հայտնի չի նրանց մասին:

Ճշմարտության իրավունքի վրա հիմնված դատական գործը վերցնում է դատավոր Օյարբիդեն եւ սկսում հետաքննությունը՝ խնդրագիր ներկայացնելով ավելի քան 20 պետություններ՝ ուղարկել խնդրո առարկա ժամանակահատվածին վերաբերող այն արխիվներն ու փաստաթղթերը, որ կարող էին նպաստել կատարվածի վերաբերյալ ճշմարտության բացահայտմանը:

Եղան պետություններ, որ մերժեցին համագործակցելը, եղան պետություններ, որոնք ժխտելով հանդերձ որպես ցեղասպանություն որակել հայ ժողովրդի ապրածը՝ այնուամենայնիվ բաց արեցին իրենց արխիվները եւ թույլ տվեցին, որ շատ, մինչ այժմ անհայտ փաստաթղթեր մաս կազմեն դատական գործի, դառնալով վերջնական եզրակացության հիմնական հենակետերից մեկը:

Արգենտինայում դատավորը հնարավորություն է ունեցել լսելու կոտորածներից փրկված տասնյակից ավելի անձանց այն տարիներին կրած տառապանքների մասին պատմությունները:

Երկրի հայ համայնքի կարեւորագույն հաստատությունները միացան «Լուիզա Հայրապետյան» հաստատության քայլին, մասն դառնալով հայցվոր կողմին:

Տարիներ անցան, սակայն հավաքված ապացույցները դեռ բավարար չէին, որ դատավորը տար իր վերջնական կարծիքը: Փաստաթղթերի առաքման, դրանց թարգմանությունների եւ իսկությունների հաստատման համար պահանջվող ժամանակը թերեւս ուշացման հիմնական պատճառն է:

Վերջապես հասավ այդքան սպասված օրը:

Եվ մեր համայնքը, նախաձեռնությամբ մի ընտանիքի, որ սերտորեն կապված է հանուն արդարության ու մարդու իրավունքների լիարժեքության, հանուն նոր՝ առանց շահագործողների ու շահագործվողների, հասարակարգի պայքարի, մասն դարձավ պատմական մի իրադրության, որ մեր վաղեմի պայքարի պատմության մեջ կնշանավորվի որպես «նախքան»-ը եւ «հետո»-ն առանձնացնող կարեւորագույն կետ:

Երբ ժամը 13:30 դատավոր Օյարբիդեն մտավ Արդարադատության պալատի «Ա» սրահը, այն արդեն ամբողջապես զբաղված էր «Լուիզա Հայրապետյան» հաստատության անդամներով, տեղիս հայ համայնքի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներով, լրագրողներով ու մեկնաբաններով, օրենքին ծառայող տղամարդկանցով ու կանանցով, մարդու իրավունքների պաշտպաններով:

Իշխող լռությունն այլ բան չէր, տարիներ շարունակ թաքնված ցավի, վշտի ու տառապանքի եւ տասնամյակների անկոտրում պայքարի մի խառնուրդ:

Դատավորը կարդաց շարադրվածքի էական պարբերությունները: Մի քանի անգամ դադարեցրեց ելույթը՝ հաղթահարելու հույզերը, որ դուրս էին հորդում փաստաթղթում թվարկված հայ ժողովրդի կրած տառապանքների նկարագրություններն ընթերցելիս:

Դատավորն ակնհայտորեն հուզված էր՝ մեջբերելով Եղեռնը վերապրողներից մեկի խոսքերը, որ այն եղեռնական օրերին ընդամենը 3 տարեկան է եղել. «Այս հայցը որեւէ նյութական պահանջ չի ներկայացնում, այլ միայն հնարավորություն՝ ասելու մեր պապերին ու ծնողներին, որ 95 տարի հետո մենք չենք մոռացել նրանց ու շարունակում ենք պայքարել մինչեւ հասնենք արդարության»:

Ժամը 14:05 դատավոր Նորբերտո Օյարբիդեն հայտարարեց.

«Որոշում եմ.

Հիմնվելով ներկա հայցվոր Գրեգորիո Հայրապետյանի հարուցած No 2.610/2001 դատական գործի հետքննության արդյունքների, վերը նշված պայմաններն ու դրանց նպատակների ուսումնասիրության վրա, ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, որ Թուրքիա պետությունը 1915 -1923 թթ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՆՔ է գործել Հայ ժողովրդի դեմ»:

Դատավոր Օյարբիդեն հերթականորեն ներկայացրեց բանաձեւի մնացած կետերը, սակայն ներկաները, որոնց աչքերը լցված էին, չէին կարողանում զսպել իրենց հոգիներից դուրս ժայթքող կրակը:

Պայթեցին բուռն ծափահարություններն ու դրանց հետեւեցին ներկաների հուզված գրկախառնությունները Հայրապետյան ընտանիքի՝ ի դեմս իրավաբան Գրեգորիո Հայրապետյանի, նրա դուստր Բեատրիսի եւ թոռան՝ Ֆրեդերիկի, եւ հայ համայնքի տարբեր կազմակերպությունների ու նրանց լրատվական միջոցների ներկայացուցիչների միջեւ:

Արգենտինայում, որտեղ ցույց է տրվում, որ անցյալի ողբերգություններին հարցի փակման միակ ճանապարհը արդարության հաստատումն է, մեղավորներին պատժելը, այս դատավճիռը մարդու իրավունքների բնագավառում երկրի հեղինակության բարձրացնող եւս մեկ քայլ է:

Եվ մենք, ծագումով հայ արգենտինացիներս, կարողացել ենք ավազի մեր համեստ հատիկն ավելացնել անարդարության ու անպատժելիության դեմ մեր ժողովրդի մշտական պայքարին:

«Դավաճանների» հայրենասիրությունը

Արտասահմանյան մի շարք ուսումնական հաստատություններում, դպրոցներում մինչեւ այժմ էլ պահպանվում է հին ու բարի ավանդույթը, երբ սովորողները նույն համազգեստով են: Նույնը կար նաեւ սովետական ժամանակաշրջանի դպրոցներում, մի փիչ ավելի նվազ՝ այսօրվա հայկական դպրոցներում: Բավական աչք շոյող պատկեր է, երբ հատկապես առավոտյան ժամերին դպրոցների բակերում տեսնում ենք միանման հագնված երեխաների, որոնք բոլորը, անկախ սոցիալական վիճակից, ունեին մեկ ընդհանուր անուն՝ աշակերտ: Գրեթե նույն պատկերն է բանակում: Մենք բոլորս էլ հպարտության զգացում ենք ունենում՝ տեսնելով միանման համազգեստով մեր որդիներին, եղբայրներին, որոնք սահուն շարային քայլով քայլերթ են անում շարահարպարակում կամ մասնակցում զորավարժությունների: Ճարտարապետության մեջ էլ կա սիմետրիա հասկացությունը, երբ, ասենք, տվյալ շինության կամ սենյակի բոլոր կամարները ունեն միեւնույն բարձրությունը. որոշ մասնագետների կամ պարզապես մարդկանց համար բավական հաճելի է հենց այս կերպ կառուցել իրենց շինությունները, մինչդեռ կան նաեւ այնպիսիք, որոնք նախընտրում են ասիմետրիան: Սա էլ այն դեպքն է, երբ նույն կամարները տարբեր բարձրության են. մասնագետների խոսքերով՝ ասիմետրիան, ի տարբերություն սիմետրիայի, չի հոգնեցնում նայողի աչքը եւ ձանձրալի պատկեր չի տալիս ընդհանուր շինությանը կամ սենյակին նայելիս:

Փաստորեն միանմանությունը ոչ բոլոր դեպքերում է դուրեկան. ասենք, քաղաքականության մեջ, միանմանությունը, որը կնշանակի միակարծություն, ինչն էլ իր հերթին՝ միակուսակցություն, ակնհայտ է, որ չի կարող նպաստակահարմար լինել պետության զարգացման ճանապարհին: Հասարակության մեջ նույնպես «սիմետրիան» բավական վտանգավոր երեւույթներով է հղի՝ լճացնող լինելու առումով: Երբ բոլորս միանման մտածենք, չի լինի մեկը կամ մի քանիսը, որոնք ճիշտ կմտածեն, որովհետեւ ճշմարտությունը՝ որպես կանոն, ծնվում է առողջ բանավեճում, քննարկումներում, տարակարծություններում... եւ ոչ երբեք՝ համընդհանուր միասնական կարծիքից, որը սովորաբար լինում է պարտադրված: Ինչեւէ. վերջին շրջանում, փաստորեն, ունեցանք մի շարք «դավաճաններ», որոնց միակ մեղքն այն է, որ այլ կերպ են մտածում, քան հասարակության զգալի մասը՝ ընդամենը: «Դավաճանների» շարքում են Գեորգի Վանյանը, «դավաճան» է որակված նաեւ, չզարմանաք (հատկապես մեծանուն դերասանին լավ ճանաչողները-Հ. Ա.) Արմեն Ձիգարխանյանը: Առաջինը մեղավոր է, որ, ճիշտ է, նախօրոք համապատասխան գրանտ ստանալով, որոշել էր Հայաստանում անցկացնել ադրբեջանական ֆիլմերի փառատոն: Կարծեմ ընթերցողները կհիշեն, թե ինչ ճակատագրի արժանացան ադրբեջանական ֆիլմերը մեր երկրում, ճիշտ նույն՝ ինչ Բաքվի սրճարաններում Շառլ Ազնավուրի երգերը, կամ, եթե հարեւան Ադրբեջանում որոշեին անցկացնել հայկական ֆիլմերի փառատոն: Այսինքն՝ մենք ադրբեջանական ֆիլմերի հետ վարվեցինք այնպես, ինչպես իրենք կվարվեին մեր ֆիլմերի հետ: Չգիտեմ, սա որքանով է ճիշտ, բայց հաշվի առնելով, թե մենք ինչպես ենք գրում, ինչ տնայնությամբ Ադրբեջանում արգելված ու արգելվող հայկական ամեն ինչի մասին, չեմ կարծում, թե ճիշտ է: Անշուշտ, ադրբեջանական ֆիլմերում, եթե դրանք ցուցադրվեին, պետք է ցուցադրվեր «հայ մարդը»՝ «արյունարբու, դահիճ, նենգ, գող...», բայց իրո՞ք մեզ պետք չէ այս ամենը դիտել սեփական աչքերով. չէ՞ որ, բացի այս ամենից, նույն ադրբեջանական ֆիլմերը պատմելու եւ ցուցադրելու էին նաեւ շարքային ադրբեջանցուն՝ նրա ներաշխարհը, ադրբեջանական հասարակությունը՝ նրա առանձնահատկությունները. մեզ՝ հայերիս այս ամենը հաստա՞տ պետք չէ, թեկուզ տեղեկատվական պատերազմում: Օրինակ՝ ամերիկյան բանակում արաբերենի, արաբ մշակույթի ու սովորությունների հատուկ դասընթացներ են տարվում, ֆիլմեր ցուցադրվում, նույնը՝ իրաներենի մասով, ինչո՞ւ ամերիկացի մայրերը, լրագրողները չեն մեղադրում այս նախաձեռնության հեղինակներին դավաճանության մեջ: Թերեւս հասկանում են, որ թշնամուն լիարժեք հաղթելու համար նրա մասին պետք է իմանաս հնարավոր ամեն ինչ, այդ թվում՝ լավը: Բացի սրանից, ինչո՞ւ չենք բողոքում, որ Երեւանում ամեն ամառ դիտում ենք թուրքական ֆիլմ, նույնիսկ դրանցից մի քանիսին գլխավոր մրցանակ ենք հանձնում: Թուրքերն արդեն մեզ թշնամի չե՞ն, թե՞ թուրքերից ստացած վերքերի սպիներն արդեն հին են՝ ի տարբերություն ադրբեջանցիներից ստացած վերքերի: Ինչո՞ւ ենք սովորում թուրքերեն, նույնիսկ՝ մասնավոր, բայց ադրբեջաներենի ոչ մի դասընթաց չկա, մինչդեռ վերջինս մեզ եթե ոչ ավելի, գոնե նույնքան անհրաժեշտ է:

Իսկ ո՞րն է Արմեն Ձիգարխանյանի «մեղքը»: Ձիգարխանյանը «մեղավոր» է, որովհետեւ կարծում է, թե «ինչ-որ կիսաֆաբրիկաս մարդիկ խառնեցին մեզ իրար...», իրո՞ք սա այսպես չէ: Իսկ ի՞նչ արեցին Ստալինից սկսած գրեթե բոլոր սովետական առաջնորդները, ի՞նչ արեցին որոշ նախասովետական առաջնորդներ, չխառնեցի՞ն, չէ՞ որ ժողովուրդները, տրամաբանորեն, չեն կարող «միմյանց չսիրել», միմյանց չեն սիրում նրանց առաջնորդները, որը եւ «վարպետ առաջնորդները» տարածում են ժողովուրդների վրա: Ձիգարխանյանը «մեղավոր է», որ «ոչ թե կգնար, այլ կվազեր Բաքու...», ինքս՝ որպես լրագրող, խոստովանում եմ, հնարավորության պարագայում ոչ թե կգնայի, այլ կվազեի Բաքու: Դերասանը չի ասում, որ ցանկանում է Բաքու գնալ՝ ապրելու, այլ ընդամենը, խոսելով Բաքվի թատերական ավանդույթների մասին, ինչը եղել է իրոք, ցանկություն է հայտնում իր թատրոնով հյուրախաղեր ունենալ Ադրբեջանի մայրաքաղաքում: Ուրեմն նա «դավաճա՞ն է»: Լավ, եթե իրոք այդպես է, ապա էլ ինչպե՞ս մենք ադրբեջանցիների հետ պետք է գտնենք երկխոսության ձեւեր, չէ՞ որ մշակույթը, մանավանդ այնպիսի անհատականությունը, որը հարգված է հակամարտության երկու կողմերում, նման դեպքերում շատ հաճախ ստանձնել է եւ պետք է ստանձնի այն «խելագարի» դերը, որի բացած ճանապարհով ընթանում են խելացիները:

Եթե մենք՝ հայերս, իրոք ուզում ենք ապրել արժանապատիվ ու բաց՝ մեր հարեւանների հետ, եթե մենք իրոք ցանկանում ենք լուծել բոլոր հակամարտությունները, հարցերը, տարաձայնությունները հիմա, այլ ոչ փոխանցել մեր երեխաներին, ապա ստիպված ենք խոսել մեր «թշնամիների հետ»՝ հենց նրանց լեզվով, լավ իմանալով նրանց սովորությունները, առանձնահատկությունները, լեզուն: Ադրբեջանում, օրինակ, հայերենի մի շարք մասնագետներ կան, նույնիսկ հայերենով ադրբեջանական լրատվական կայք՝ «Արմենիա.ազ», բայց չգիտես ինչու այս մարդիկ հարեւան երկրում «դավաճաններ» չեն համարվում, այլ տեղեկատվական պատերազմի «առաջին գծի զինվորներ», որոնք առիթի դեպքում կարող են եւ պետք է դառնան երկու ազգերի երկխոսության առաջին նախաձեռնողները: Իսկ այդ երկխոսությունը մի օր կայանալու է անպայման, եւ Ձիգարխանյանը, որն այն բացառիկ, եթե ոչ միակ հայ անվանի դերասանն է, որը, իր իսկ խոսքերով, «ընդունում է հայերից ամեն մի առաջարկ, անգամ՝ գովազդում նկարահանվելու...», այլ ոչ տեղի անտեղի փնովում հայ երիտասարդ դերասաններին, մի օր իր թատրոնով լինելու է Բաքվում, հակամարտությունները, պարզապես, այլ կերպ չեն լուծվում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Նախկին չեռնոբիլականը բաց արեց աղեսի գաղտնիքը

Չեռնոբիլ, Փուկուշիմա, Մեծամոր

Չեռնոբիլի ատոմակայանի ղեկավարի նախկին տեղակալ **Ալեքսանդր Կովալենկոն** ապրիլի 6-ին Ինտերֆաքս գործակալությանը տված հարցազրույցում կարծիք հայտնեց, որ երկրաշարժից եւ ցունամիից հետո ճապոնական «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում որեւէ տեխնոգեն աղետ չի եղել, բայց «օպերատոր ընկերության ղեկավարների շփոթվածությունը եւ անգործությունը միջին բարդության վթարը հասցրել են իսկական աղետի»:

Կովալենկոն չեռնոբիլյան աղետից հետո նաեւ դրա հետեւանքների վերացման կառավարական հանձնաժողովին առընթեր տեղեկատվության եւ միջազգային կապերի բաժնի պետն էր: Նրա խոսքերով, Ճապոնիայի իշխանությունները եւ ատոմագետները անտեսել են Չեռնոբիլի կազմակերպական-տեխնիկական դասերը եւ դանդաղ են գործել:

Բնական աղետից հետո կայանի աշխատակիցները ղեկավարության հրամանով տարհանվեցին: Որոշումն ընդունվեց ուժային կայանքի ներսում ճնշման աճի եւ ճառագայթման մակարդակի բարձրացման պատճառով: «Դրա հետեւանքով էապես իջավ ջրի մակարդակը, հանգեցնելով ռեակտորների ներսում ճնշման աճին, հետագա պայթյուններին եւ արտանետումներին, իսկ ճառագայթումն աղետալիորեն ուժեղացավ», նշում է փորձագետը:

Շարժական ուժակայանքներով էլեկտրամատակարարման վերականգնման աշխատանքները 1-ին եւ 2-րդ բլոկներում սկսվեցին միայն մարտի 14-ին, երբ վթարն արդեն վերաճել էր աղետի:

Մինչդեռ համանման իրավիճակ ծագել էր ԽՍՀՄ-ում, երբ 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի մոտ 8 բալանոց երկրաշարժից հետո Մեծամորի ԱԷԿ-ում կարճ ժամանակամիջոցում իրավիճակը կայունացվեց, եւ հաջողվեց կանխել աղետը:

Նախկին չեռնոբիլականի խոսքերով, հայկական ԱԷԿ-ի գրեթե բոլոր աշխատակիցները հեռացել էին, եւ ծագել էր ռեակտորի գերտաքացման վտանգ: Վթարի կանխման նպատակով ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը եւ «Մինատոմը» անհապաղ անձնակազմ էին ուղարկել ուրիշ ատոմակայաններից, գլխավորապես՝ Կոլայի ԱԷԿ-ից: Այսպիսով, ընդամենը մի քանի ժամում տեղ հասած մասնագետները վերականգնել էին ակտիվ գոտու հովացմանն ուղղված ջրի մատուցումը, այդ թվում՝ հրեջ մեթենաներով:*

Կովալենկոյի կարծիքով, «Ֆուկուշիմա-1»-ի եւ Ճապոնիայի կառավարության ձեռնարկած միջոցներն այնքան էլ արդյունավետ չեն: Վնասված ռեակտորները հատուկ գործվածքից պատրաստված «թասակներով» ծածկելն անօգուտ է, քանի որ գործվածքն արագորեն կքայքայվի բարձր ջերմության ազդեցությունից:

Ինչ վերաբերում է հեղուկ ռադիոակտիվ թափոնների վերամշակման համար նախատեսված ռուսական «Լանդիշ» նավարկող համալիրին, դրանից Ճապոնիան մեծ օգուտ չի ստանա, քանի որ «Լանդիշը» միայն ցածր եւ միջին ակտիվության ռադիոակտիվ թափոնների համար է:

Կովալենկոյի կարծիքով, «Ֆուկուշիմա-1»-ի շուրջը առնվազն 30 կմ շառավղով ընկած տարածքը երկար ժամանակ, գուցեեւ առհավետ պիտանի չի լինի բնակության եւ տնտեսական գործունեության համար:

Եթե Չեռնոբիլում տեղի էր ունեցել ռեակտորի պայթյուն, ապա Ֆուկուշիմայի նահանգում պատահածը երկրաշարժի եւ ցունամիի հետեւանք է:

Ճապոնացիների դանդաղկոտության պատճառը հայտնի է դառնում The Wall Street Journal թերթի հայթայթած TEPCO-ի գործողության հրահանգներով: Պարզվում է, որ օպերատոր ընկերությունը փաստորեն չի ունեցել վաստակագույն սցենարի դեպքում ԱԷԿ-ի ենթակառույցի կործանումը կանխելու ծրագիր: Վթարի ծանուցումը չէր ներառում համազգային վթարային ծառայությունները եւ ինֆորմացիայի ուժերը: Իշխանությունների, այդ թվում միջուկային էներգետիկայի նախարարի եւ նահանգապետի ծանուցման գլխավոր միջոցը ֆաքսն էր: Հաղորդումը պետք է ուղարկվեր «15 րոպեում», եւ միայն առանձին դեպքերում ԱԷԿ-ի աշխատակիցներին թույլատրվում էր հեռաձայնել ֆաքսի սացումը հաստատելու համար:

Չեռնոբիլում պայթյունից անմիջապես հետո սկսվեց «սարկոֆագի» (պատյանի) կառուցումը, որը ծածկեց վնասված ռեակտորը: Իսկ Ճապոնիայում որոշել են ավերված էներգաբլոկները ծածկել հատուկ գործվածքից պատրաստված «թասակներով», որոնք չեն կարող երկար դիմանալ բարձր ջերմաստիճանին: Չեռնոբիլում 30 կիլոմետրանոց գոտուց մարդկանց տարհանումը պարտադիր էր, իսկ Ֆուկուշիմայում մինչեւ օրս տարհանումը հանձնարարական բնույթ է կրում: Մինչդեռ «չեռնոբիլական» մասնագետները TEPCO-ի տեղեկատվության հիման վրա հաշվարկել են, որ վթարից հետո անցած ժամանակամիջոցում Ֆուկուշիմայի ԱԷԿ-ից 5-10 կմ հեռավորության վրա ճառագայթման չափաբաժինը կարող է կազմել 400 միլիզիվերտ, 10-20 կմ-ի վրա՝ մինչեւ 300 միլիզիվերտ, 20-30 կմ-ի վրա՝ մինչեւ 150 միլիզիվերտ: Կովալենկոն 30 կիլոմետրանոց գոտում մնացող 140 հազար ճապոնացիներին զգուշացնում է, որ 50 միլիզիվերտը ատոմային օբյեկտներում օպերատորների ճառագայթման տարեկան թույլատրելի չափաբաժինն է: 250 միլիզիվերտը պրոֆեսիոնալ լիկվիդատորների թույլատրելի առավելագույն վթարային չափաբաժինն է: Նման ճառագայթում սանալուց հետո մարդը, որպես կանոն, պետք է բուժվի եւ այլեւ չաշխատի ԱԷԿ-ում եւ վտանգավոր այլ օբյեկտներում: 300 միլիզիվերտը հարուցում է ճառագայթային հիվանդության նշաններ: 4000 միլիզիվերտը ճառագայթային հիվանդություն է մահվան հավանականությամբ: Ի դեպ, 1000 միկրոզիվերտը կազմում է ժամում 1 միլիզիվերտ:

Հայաստանի ատոմակայանի դեպքերի մասին հասարակայնությանը մինչեւ օրս գրեթե ոչինչ հայտնի չէ, նշում է Ինտերֆաքսը: Չեռնոբիլի ԱԷԿ-ի դեպքերի եւ դրանց հետեւանքների մասին եւս մինչեւ օրս հստակ պատկերացում չունենք:

Օրերս TEPCO ընկերությունը Չեռնոբիլում աշխատած լիկվիդատորներին հրավիրել է պայքարելու «Ֆուկուշիմա-1»-ի վթարի հետեւանքների դեմ: Ֆրանսիական L'EXPRESS շաբաթահանդեսի տվյալներով, ընկերությունը խոստանում է նրանցից յուրաքանչյուրին վճարել օրական 5000 դոլար: «Չեռնոբիլականները» Ռուսաստանում այդքան փող ստանում են մեկ տարում: Ճապոնական ԱԷԿ-ի ներսում ճառագայթման մակարդակը չափազանց բարձր է, իսկ դրսում տեղ-տեղ 100 միլիզիվերտից ավելի է:

Ապրիլի 6-ին TEPCO-ն սկսեց ազոտ ներմղել 1-ին էներգաբլոկի շենքի մեջ, որպեսզի թթվածինը չմիանա ջրածնին եւ նոր պայթյուն չառաջացնի: Այս կապակցությամբ Ալեքսանդր Կովալենկոն հիշեցնում է, որ համանման քայլ ձեռնարկվել էր նաեւ Չեռնոբիլում: Վթարից արդեն 5 օր հետո ակադեմիկոս Վալերի Լեգասովի առաջարկությամբ սկսել էին ռեակտորի տակ լցնել հեղուկ ազոտ: Բայց դրա հետեւանքով շատացել էին արտանետումները, աղտոտելով Բելառուսի որոշ շրջաններ: Շուտով ակադեմիկոսը հասկացել էր իր սխալը, եւ ազոտի սփռումը դադարեցվել էր:

Ատոմային օբյեկտներում տեղի ունեցած խոշոր վթարների համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ատոմային արդյունաբերության ղեկավարները միշտ փորձում են իրավիճակը ներկայացնել լուսավոր տներով: Չեռնոբիլին վերաբերող տեղեկատվությունը երկար ժամանակ գաղտնի էր պահվում: «Ֆուկուշիմա-1»-ի վթարի մասին սկսեցին խոսել դրա առաջին իսկ ժամերից, թեեւ Ճապոնիայի կառավարությունը մի քանի օր փորձում էր բնակչությանը համոզել, թե սարսափելի ոչինչ չի պատահել: Մինչդեռ ռեակտորի հովացման համակարգի էլեկտրասնուցման խափանումից հետո բնակչությունը պետք է անմիջապես տարհանվեր: Տարհանումը սկսվեց միայն երկու օր անց, երբ մարդիկ արդեն ճառագայթահարվել էին: Կովալենկոն այս պնդումն անելիս հիմք է ընդունում Ճապոնիայի կառավարության տվյալները, որոնց համաձայն ԱԷԿ-ի շուրջը ծագած ռադիոակտիվ ֆոնի մակարդակը ժամում 1200 միկրոզիվերտ է (մեկ օրում 30 հազար միկրոզիվերտ): Չեռնոբիլի վթարից հետո Պրիպյատից տարհանված բնակիչները ճառագայթվել էին 33 հազար միկրոզիվերտ:

Բացի դրանից, «Ֆուկուշիմա-1»-ի շուրջը հայտնաբերվել են ռադիոակտիվ յոդ եւ ցեզիում: Վերջինս մասնակիորեն տրոհվում է 30 տարում: ԱԷԿ-ից դուրս այդ նյութերի առկայությունը վկայում է, որ քայքայված է մեծաքանակ ներքին իրանը:

Վերջին 20 տարիների փորձը հաշվի առնելով, Կովալենկոն առաջարկում է ստեղծել «տեղեկատվական Աստված», այսինքն անկախ եւ վստահելի կազմակերպություն, որը կտարածի ոչ թե գերատեսչական, այլ անաչառ տեղեկատվություն: Այդ ծառայության մեջ պետք է մտնեն զանազան շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Պատրաստեց Պ. Ք.

Այս մասին կուզենայինք լսել մեր մասնագետներից. արդյո՞ք մեր ԱԷԿ-ի բոլոր աշխատակիցները հեռացել էին, այլ խոսքով՝ փախուստ տվել-խմբ**.*

ԳԱԳԱՐԻՆԻ ՍՈՐԱՆՔԻ 50-ԱՄՅԱԿ

Հայ գիտնականները՝ Յուրի Գագարինի տիեզերք կատարած թռիչքի 50-ամյակին

50 տարի առաջ այս օրը մեծագույն իրադարձություն էր ոչ միայն սովետական, նաեւ միջազգային գիտական հանրության համար. աշխարհին հայտնի դարձավ տիեզերքի առաջին մարդը՝ Յուրի Գագարինը: Ռուս տիեզերագնացը պատմության մեջ անջնջելի հետք թողեց՝ տիեզերք կատարած առաջին թռիչքով:

Այս օրերին միջազգային հանրությունն ու լրատվամիջոցները լայնորեն նշում են 20-րդ դարի ամենանշանակալից իրադարձություններից մեկը: Ռուսական լրատվամիջոցներն ու գիտական հանրությունը, իհարկե, ըստ արժանվույն են դա նշում՝ մեծ հնչեղությամբ եւ կազմակերպվածությամբ:

Գագարինյան թռիչքի կեսդարյա հոբելյանի մեծարումներին իրենց մասնակցությունն են բերում նաեւ հայ գիտնականները: Օրեր առաջ մեր պատվիրակությունը մասնակցեց Մոսկվայում տեղի ունեցող 50-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ ԳԱԱ տեղեկատվական վերլուծական կենտրոնը, ապրիլի 8-ին ակադեմիայի նախագահությունում տեղի ունեցավ հանդիպում ռուսական պատվիրակության հետ, որը գլխավորում էր տիեզերագնաց Միխայիլ Տյուրինը: Հանդիպման ընթացքում քննարկվել են տիեզերական տարածության յուրացման հետագա համագործակցության ուղիները: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրել է ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի փորձը տիեզերական հետազոտությունների ծրագրերում: «Օրիոն» ուղեծրային համակարգի մշակման գործում հայ գիտնականների փորձի մասին է խոսել ֆիզմաթ գիտությունների դոկտոր Վահագն Գուրզադյանը: Եվ ակադեմիկոս Էվրիկ Աֆրիկյանը հանդես է եկել տիեզերական թռիչքներում միկրոբային դեգրադացիաների եւ երկրագնդի մերձակա տարածությունների յուրացման մասին զեկուցմամբ:

Նույն օրը՝ երեկոյան, Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Վահագն Գուրզադյանը պատմեց Գրիգոր Գուրզադյանի ղեկավարությամբ տիեզերական աստղագիտության վաղ շրջանում հայ մասնագետների մասնակցության մասին՝ խոսքը տպավորիչ դարձնելով պատմական հետաքրքրություն ներկայացնող լուսապատկերային ցուցադրությամբ:

Գիտական այդ անհանգիստ օրերի համառոտ դրվագներ ներկայացրին այդ հետազոտությունների մասնակիցներ, թեսական մրցանակի դափնեկիրներ Ալեքսանդր Կաշինը եւ Աշոտ Զախարյանը: Ավարտին ցուցադրվեց Ռիտա Շառոյանի նկարահանած «Տիեզերքը ափի մեջ»՝ Գրիգոր Գուրզադյանին նվիրված ֆիլմը, որը փորձ էր ստեղծել գիտնականի, արվեստագետի ու մտածողի ներդաշնակ կերպար:

Այսօր ՀՀ ԳԱԱ-ում կշարունակվի հոբելյանական նստաշրջանը:

Մ. Ք.

Քադդաֆին ընդունել է Աֆրիկյան միության առաջարկները

Լիբիայի կառավարությունը Մուամմար Քադդաֆիի գլխավորությամբ ընդունել է երկրի իրադրության կարգավորման վերաբերյալ Աֆրիկյան միության պատրաստած առաջարկությունները: Այդ մասին երեկ Ֆրանսպրեսի թղթակցին հայտնել է Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Ջեյկոբ Զուման:

Աֆրիկյան միության պատվիրակությունը Քադդաֆիի հետ բանակցել էր կիրակի օրը Տրիպոլիում: Առաջարկությունների վերաբերյալ մանրամասնություններ չեն հրապարակվում: Զումայի խոսքերով, մնում է, որ պատվիրակությունը Բենգազիում բանակցի լիբիացի ապստամբների հետ:

Ավելի վաղ՝ կիրակի օրը հայտնի էր դարձել, որ Քադդաֆիի կողմնակիցներն ավարտել են աշխատանքը Լիբիայի սահմանադրության սեւագիր նախագծի վրա: Իշխանությունների ներկայացուցիչները չեն պարզաբանել, թե սահմանադրության ընդունումից հետո ինչպիսին է լինելու երկրի քաղաքական կառուցվածքը եւ նոր համակարգում ինչ տեղ է հատկացված Քադդաֆիին, որը փաստորեն պետական որեւէ պաշտոն չի զբաղեցնում:

Լիբիայի արեւելքում Ազգային անցումային խորհուրդ ձեւավորած ապստամբները պահանջում են, որ Մուամմար Քադդաֆին եւ նրա ընտանիքը հեռանան իշխանությունից:

Մուբարաքին կհարցաքննեն սպանությունների եւ յուրացումների գործերով

Ձերբակալվել են նախկին վարչապետը եւ շինարարը

Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքին հարցաքննության են կանչել զանգվածային անկարգությունների ժամանակ նրա վարչակարգի մի շարք հակառակորդների սպանության գործի կապակցությամբ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով Եգիպտոսի դատախազության նյութերը:

Մուբարաքին կհարցաքննեն ցուցարարների վրա կատարված հարձակումներին մեղսակից լինելու կասկածանքով: Որոշ գնահատումների համաձայն, Եգիպտոսում հակակառավարական ելույթների ժամանակ ընդհանուր առմամբ սպանվել է մոտ 800 մարդ:

Բացի դրանից, դատախազությունը փորձում է նախկին նախագահից ցուցմունքներ ստանալ կաշառակերության գործի առնչությամբ: Մուբարաքի հետ հարցաքննության են կանչվել նրա երկու որդիները:

Եգիպտոսի դատական համակարգում Ֆրանսպրեսի աղբյուրները հայտնել են նաեւ երկրի նախկին վարչապետ Ահմեդ Նազիֆի ձերբակալության մասին: Նրան 15 օրով կալանավորել են կաշառակերության գործի քննության շրջանակներում:

Հաղորդվում է նաեւ, որ իշխանությունները ձերբակալել են շինարարության նախկին նախարար Իբրահիմ Սուլեյմանին: Քննիչները նշում են, որ նա եւ իր երեք որդիները Կահիրեում եւ այլ քաղաքներում ունեն 10 առանձնատուն, մի քանի թանկարժեք ավտոմեքենա եւ տարբեր ընկերությունների բաժնետոմսեր:

Վանուշ Խանամիրյանի «Բարդիները» փայլեցին բեմում

Մեր ժամանակների պարի լեգենդ, ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր Վանուշ Խանամիրյանը բազմաթիվ (մոտ 2 տասնյակ) պետական եւ ոչ պետական պարային համույթների, խմբերի հիմնադիրն է, նա շուրջ 67 տարի իրեն նվիրել է հայ մշակույթի ավանդույթները պահպանելու եւ սերունդներին փոխանցելու կարեւոր գործին: Վկան՝ Գլենդելում, Մարսելում, Նյու Յորքում եւ այլ քաղաքներում իր անունը կրող պարախմբերն են: Հայաստանում արդեն կես դար շատ պարախմբերի պարացանկից դուրս չեն գալիս Խանամիրյանի բեմադրած պարերը, որոնք դարձել են սիրված ոչ միայն հայերիս, այլ նաեւ օտարազգիների համար:

84-ամյա պարուսույցը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի լեփ-լեցուն հանդիսականների առջեւ վերջերս հանդես եկավ նորաստեղծ «Բարդիներ» պարախմբով: Հիրավի բարդիներ. սլացիկ, հեզաձկուն հայուհիների մանրաքայլ պարային շարժումներն այնքան եթերային էին ու գեղեցիկ, որ աչք կտրել չէր լինում: Այդ անդրանիկ համերգ-ցնցությունը, ինչպես **«Ազգի»** հետ զրույցում ասաց պրն Խանամիրյանը՝ «Իմ պայքարի նոր ձեւն է հայ պարարվեստը աղավաղողների, մեր ազգային պարային շարժումները խեղաթյուրողների, պորտները, ազդրերը եւ էլի մարմնի շատ մասերը բացած վայ պարուսույցների մարգած պարախմբերի դեմ, որոնցից շատերն անգամ մեդալների ու կոչումների են արժանացել: Ո՞ւր ենք գնում այսպես, ազգային դեմքը կորցրած ինչի՞ ենք հասնելու: Եվ ահա ես իմ «Բարդիներով», իմ չքնաղ 18 աղջիկներով պայքարում եմ նրանց դեմ եւ ի ցույց աշխարհի ներկայացնելու եմ իսկական հայկական պարը իր բոլոր շարժումներով, այլ ոչ թե ինչպես այժմ շատերն են անում, էժանագին ձեւով ծափերի արժանանում...»: Իսկ թե ինչպես մտահղացավ ստեղծել նոր պարախումբ, պրն Խանամիրյանը պատմեց, որ վեց ամիս առաջ իրեն են մոտենում Պարարվեստի ուսումնարանն ավարտած հինգ երիտասարդ աղջիկ եւ խնդրում են իրենց հավաքագրել, նոր պարախումբ ստեղծել: Այդպես էլ լինում է: Մրցույթում հաղթած 18 աղջիկներ համարվում են նորաստեղծ պարախմբի անդամներ: «Ես պարախումբը անվանեցի «Բարդիներ», որովհետեւ նրանք բարդիների պես սլացիկ էին, բոլորը 170 սմ հասակով, գեղեցիկ հայուհիներ», պատմում էր պրն Խանամիրյանը: Պարախումբը առանց ֆինանսավորման կարճ ժամկետում յուրացրեց անվանի բալետմայստրի բեմադրած 18 պարերը: Եվ պատահական, մի առիթով պրն Խանամիրյանը իր նորաստեղծ պարախմբի մասին պատմում է գործարար, ԱԺ պատգամավոր, ՎՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին ու այդ օրվանից պրն Ծառուկյանը դառնում է «Բարդիների» հովանավորը: Կարվում են հագուստներ՝ Վ. Խանամիրյանի էսքիզներով, փոռձավարներ՝ Գայանե Խանամիրյանին, Աշոտ Ազատյանին, պարողներին եւ նաեւ այլ ծախսեր նույնպես վճարում է Գագիկ Ծառուկյանը: Պարախումբը փորձնական համերգներ է տվել Գյումրիում, Եղեգնաձորում, Արտաշատում, Գավառում: Իսկ անդրանիկ ելույթը կրկին «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի աջակցությամբ կայացավ, որի ընթացքում նորաստեղծ համույթին ողջունեցին Գեւորգ Դաբաղյանի դուդուկահարների խումբը, երաժիշտներ ու արվեստագետներ: Համերգը իրենց ներկայությամբ պատվել էին ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, գործարար Ռոզա Ծառուկյանը: Վերջինս համերգի ավարտին բեմ բարձրացավ ու ջերմորեն շնորհավորեց Վանուշ Խանամիրյանին ու պարախմբին, հրաշալի ժամեր պարգեւելու եւ հայ պարարվեստը անաղարտ պահելու համար: «Վանուշ Խանամիրյան» ոսկե մեդալը տիկին Ռոզա Ծառուկյանին հանձնեցին «բարդիները» որպես երախտագիտության առհավատչյա: Ի դեպ, այդ ոսկե մեդալը առաջին օրինակն էր, որին արժանացավ բարեգործը:

Նոր շնչով, նոր ոգով ստեղծված պարախումբը արդեն ստացել է հրավերներ արտերկրից:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Գարրի Սեւոյանը՝ Ուկրաինայի վաստակավոր արտիստ

2011 թվականի մարտի 24-ին Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը օպերացի Գարրի Սեւոյանին արժանացրել է Ուկրաինայի վաստակավոր արտիստի կոչման:

Այս անունն անծանոթ չէ Երեւանի բալետի եւ բալետասեր հասարակությանը, քանի որ այս բարձրահասակ, գեղադեմ, արտիստական մեծ կուլտուրայով օժտված պարողը 1989-1995 թվականներին եղել է Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի մենապարող:

1968-ին Բաքվում ծնված Գարրի Սեւոյանն իր պարով զարդարել է Ադրբեջանի, Հայաստանի, Ռուսաստանի (Ջուվաշիա) եւ Ուկրաինայի բալետային բեմերը: Նրա արտիստական կարողությունների մասին պատկերացում կարող է տալ բալետային դերերի ցանկը՝ Շահրիար («Հազար ու մի գիշեր»), Ջիգֆրիդ («Կարապի լիճը»), Դեզիրե («Քնած գեղեցկուհին»), Իշխան («Մարդուկ-Ձարդուկը»), Բազիլ («Դոն Կիխոտ»), Ալբերտ («Ժիզել»), Խոզե («Կարմեն-սյուիտ»), Պատանի («Շոպենիանա»), Պատանի («Պախիտա»), Բալզամինով (Գավրիլիի «Բալզամինովի ամուսնությունը»), Կորսար («Կորսար»), Սպարտակ («Սպարտակ»), Սոլոր («Բայադերկա»), խան Գիրեյ («Բախչիսարայի շատրվանը») եւ այլն:

Գարրի Սեւոյանը դպրոցական տարիներին աչի է ընկել բարձր առաջադիմությամբ, ուժեղ եղել հատկապես մաթեմատիկայից եւ ֆիզիկայից: 1978-1986 թթ. ուսանել է Բաքվի պարարվեստի ուսումնարանում եւ երեք տարի՝ 1986-1989 թթ. հանդես է եկել Բաքվի օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում: Բաքվում հակահայկական բռնություններից հետո կնոջ՝ Ադրբեջանի վաստակավոր արտիստուհի Լիդիա Գովորչենկոյի հետ տեղափոխվել է Հայաստան: Այստեղ նրանք դարձել են Սպենդիարյանի անվան թատրոնի մենակատարներ: 1995-ին ամերիկյան «Դեթրոյթ ֆրի պրես» հանդեսը հրատարակել է Անդրկովկասին վերաբերող հատուկ համար: Հայաստանին նվիրված հոդվածի հիմքը Գարրի Սեւոյանի եւ նրա կնոջ ճակատագիրն է: Նշված է, որ Բաքվից բռնագաղթած արտիստները բնակվում են Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի շենքում եւ որ Գարրին պատրաստվում է հանդես գալ Էդգար Հովհաննիսյանի «Դիմակահանդես» բալետում:

1995-ին Մեծ թատրոնում ունեցած հյուրախաղերից հետո Սեւոյանը մնացել է Մոսկվայում, որտեղ ժամանակ Մոսկվայում մոդել աշխատելուց հետո Գարրի Սեւոյանին կնոջ հետ աշխատանքի են հրավիրել Չեբոխսարիի օպերայի եւ բալետի պետական թատրոն, որտեղ նա մնացել է երեք տարի: Այստեղ 1997-ին նա մեծ հաջողության է հասել Իշխան Ալբերտի դերում: Ահա ինչ է գրել Նիկոլայ Տոմսկին Չեբոխսարիի «Էկրան ի սցենա» պարբերականում. «Ժիզելը (արտիստուհի Օլգա Սերյոգինա) թեթեւ էր, երիտասարդ, անմիջական, եւ իմ կարծիքով, անբասիր որպես Ժիզել: Սակայն աղմկալից հաջողությունը բաժին հասավ Իշխան Ալբերտին: Պարող Գարրի Սեւոյանը արժանացավ հանդիսականների ամենաջերմ հավանությանը: Հրաշալի արտաքին տվյալներ, կենսրոնացած աշխատանք կերպարի վրա (նույնիսկ մատների ամենափոքրիկ շարժումները, ինչպես ասում են ֆնեադաները, ենթարկված էր գեղեցկդին), բարձր խորեոգրաֆիկ վարպետություն. զարմանալի չէ, որ հասարակությունը, հատկապես կանանց մասը, ամբողջովին գերված էր»: Այս հաջողությունը պատահական չէ. Գարրի Սեւոյանը Ալբերտի կերպարի պատրաստման վրա աշխատել է դեռեւս Երեւանում՝ հայ բալետի ականավոր դեմքեր Վիլեն Գալստյանի, Իրինա Ուշակովայի եւ Հովհաննես Դիվանյանի հետ միասին: Այդ առիթով նա ասել է. «Հովհաննեսն ինձ բացահայտեց կերպարի գրեթե բոլոր շարժումների իմաստը: Գալստյանն օգնեց տեխնիկական առումով, չնայած ինչ վերաբերում է կերպարին, արդա ես նրա հետ ամեն ինչում համաձայն չէի: Նա մեկնաբանում էր Ալբերտի կերպարը որպես հայտնապես բացասական հերոս, որը գործում է սոսկ հաճույք ստանալու մղումով: Իսկ ես կարծում եմ, որ Ալբերտը, հանդիպելով Ժիզելին, ամեն ինչ մոռանում է աշխարհում, այնքան ինքնամոռաց կերպով նա տվեց իր զգացմունքին: Այլ խոսքերով, նա բառի բուն իմաստով ազնվաբարո մարդ է, ընդունակ ամենախոր զգացմունքների»:

Չեբոխսարիի թատրոնում Գարրի Սեւոյանը որպես առաջատար մենակատար հանդես է եկել մինչեւ 1998-ը: Այդ թվականից մինչ օրս նա աշխատում է Օդեսայի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում որպես բալետի առաջատար մենակատար, բեմի վարպետ: Երբեմն հրավիրվում է հանդես գալու նաեւ Խարկովի օպերայի եւ բալետի թատրոնում, որտեղ մասնակցել է «Կարապի լիճը», «Կարմեն-սյուիտ» եւ «Ժիզել» բալետներին:

Տարբեր թատրոնների կազմում Սեւոյանը հանդես է եկել Գերմանիայում, Ֆրանսիայում, Կանադայում, Իսպանիայում, Հունաստանում, Լիբանանում, Շվեյցարիայում, Բելգիայում: Նրա գեղեցիկ արտաքինը պատկերել են մի քանի նկարիչներ, մասնավորապես օդեսացի նկարիչ Սերգեյ Կռիլովսկու գեղանկարը մի քանի ամիս ցուցադրվել է բալետին նվիրված ցուցահանդեսում: Օդեսայում Գարրին պարարդում է աշակերտների հետ, որոնցից մի քանիսն արդեն հաջողություն են ունեցել միջազգային մրցույթներում: 2009-ին Գարրի Սեւոյանն ընդունվել է Կիեւի Միջազգային Սլավոնական համալսարանի բալետմայստերական բաժինը:

«Արտիստը, որը ելույթից հետո ամբողջովին գոհ է իրենից, իմ կարծիքով, դադարում է լինել լավ արտիստ: Պարը իմ կյանքն է: Կարող ենք դա անվանել կոչում կամ աշխատանք: Արտիստը երբեմն կարող է դիմանալ առանց հաց, սակայն առանց բեմի՝ հազիվ թե», մի առիթով ասել է Սեւոյանը:

Նշենք, որ Գարրի Սեւոյանի դուստրը՝ Վիկտորյա Սեւոյանը (ծն. 1995, Երեւան), նույնպես նվիրվել է բալետին: Նա մոր հետ շարունակում է պարել Չեբոխսարիում: Մասնակցել է միջազգային բալետային մրցույթների խարկովում եւ Արտեկում, արժանացել մասնագետների դրվատիքին:

Գարրի Սեւոյանը վաղուց չի եղել Երեւանում, որտեղ պարում են նրա ծնողները, որտեղ նա բազմաթիվ բարեկամներ ունի: Ցանկալի կլիներ նրան կրկին տեսնել երեւանյան բեմահարթակում, ավա՜ղ, այնքան քիչ ներկայացվող բալետային բեմադրություններից մեկում...

ԱՐԾՎԻ ԲԱԽՇՅԻՆՅԱՆ

ԳԻՐՔ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեկնարկեց Ազգային գրադարանային շաբաթը

Երեկ Ազգային գրադարանում 10-րդ անգամ տեղի ունեցավ հայկական գրադարանային ասոցացիայի կողմից կազմակերպված «Ազգային գրադարանային շաբաթը», որը կրում էր «Գրաստություն՝ գիտելիքի հավերժական ներկայություն» խորագիրը: Այն ստացել է համահայկական բնույթ՝ ընդլայնելով իր աշխարհագրությունը: Բացի Հայաստանի Ազգային գրադարանից, գրադարանային շաբաթի հանդիսավոր բացում տեղի կունենա մասնագիտական, մարզային եւ համայնքային գրադարաններում: Միջոցառման նպատակն է վերահիմնավորել գրքի, գիտելիքի, գրադարանի դերը հասարակության շրջանում: Ազգային գրադարանային շաբաթի բացմանը մասնակցեցին Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության երեւանյան գրասենյակի պատասխանատու Մարիա Դոցենկոն, Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, հրատարակիչներ, գրողներ, արվեստագետներ:

Լեւոն Անանյանը գրքի եւ ընթերցանության քարոզչության գործում ունեցած ավանդի համար խրախուսական պատվոգրեր հանձնեց Ազգային գրադարանի տնօրենին՝ Դավիթ Սարգսյանին եւ գրադարանավարներին: Այնուհետեւ տեղի ունեցավ Հայաստանի ազգային գրադարանի կայք-էջի շնորհանդեսը /www.nla.am/: Գրադարանում բացվեց նաեւ «Գրիգոր Խանջյանի արվեստը» խորագրով ցուցահանդեսը: Ցուցադրվեցին նրա մասին տպագրված ավելի քան 20 միավոր գիրք, մամուլում տպագրված հոդվածներ:

Գրադարանային շաբաթի բացման շրջանակներում ապրիլի 12-ին հայկական գրատպությանը նվիրված՝ հանրապետության գրադարաններում տեղի կունենան մի շարք միջոցառումներ: Ապրիլի 13-ին կանցկացվի մանկապատանեկան արձակ եւ չափածո ստեղծագործությունների մրցույթ: Ապրիլի 14-ին կանցկացվի հոբելյանական միջոցառումներ նվիրված՝ Գրիգոր Զոհրապի 150, Գարեգին Նժդեհի, Միսաք Մեծարենցի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Հակոբ Մնձուրու ծննդյան 125-ամյակներին: Ապրիլի 15-ը համարվում է ազատ միջոցառումների օր եւ կլինեն հանդիպումներ օրենսդիր եւ գործադիր իշխանությունների, գիտության, մշակույթի, գրականության ներկայացուցիչների հետ: Ապրիլի 16-ը նշվելու է որպես միմյանց գիրք նվիրելու օր, իսկ ապրիլի 17-ը կիսամարվի ընտանեկան ընթերցանության օր: Այդ օրը մեծահասակները երեխաների համար կկարդան գրական ստեղծագործություններ: Ազգային գրադարանային շաբաթի փակումը տեղի կունենա ապրիլի 18-ին Երեւանի քաղաքապետարանում:

Հայկական գրադարանային ասոցիացան կոչ է անում հանրապետության բոլոր գրադարաններին, շահագրգիռ կազմակերպություններին եւ անձանց՝ միանալու գրադարանային շաբաթին, միջոցառման անցկացման գործում առավելագույնս աջակցել գրադարաններին՝ ի շահ գրագետ հասարակության ձեւավորման եւ մշավոր արժեքների պահպանման:

ՄԱՆԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«System of a Down»-ը Գրինֆիլդ փառատոնի այցելուների աճի նախապայման

«System of a Down» ռոք խումբը մի քանի տարվա ստեղծագործական դադարից հետո վերսկսում է իր համերգային գործունեությունը՝ շվեյցարական Ինտերլաքենում անցկացվող Գրինֆիլդ փառատոնի (Greenfield Festival) գլխավոր մասնակիցներից մեկը լինելով: Փառատոնի ազդագրերի ձեւավորման մեջ տեսանելի տեղում հենց ամերիկահայկական սիրված ռոք խմբի անունն է, որ անկասկած պայման է դառնալու փառատոնի բազմամարդության: «System of a Down»-ը նոր անուն չէ այս փառատոնում, առաջին անգամ Գրինֆիլդին մասնակցել է 2005-ին: Կազմակերպիչները հունիսի 9-11 անցկացվելիք փառատոնին 2010-ի 20 000-ի փոխարեն 30 000 այցելու են ակնկալում: «System of a Down»-ի կողքին «ծանր» հնչյունների սիրահարները առիթ կունենան ունկնդրել նաեւ այնպիսի խմբերի, ինչպիսիք են «Foo Fighters», «Disturbed», «Volbeat», «Apocalyptica», «Young Gods», «Favez»:

Ամառային մեծ փառատոնների շարքին դասվող Գրինֆիլդը եռօրյա երաժշտական փառատոն է, որ առաջին անգամ կազմակերպվել է 2005-ին՝ մի խումբ գերմանացիների նախաձեռնությամբ: Այն անցկացվում է Շվեյցարիայի Բեռնի կանտոնի Ինտերլաքեն համայնքի թռիչքային հրապարակում, 5,5 միլիոն ֆրանկ բյուջեով ամենաթանկ փառատոնն է Շվեյցարիայում: Բացի փառատոնային մեկ համերգից «System of a Down»-ը հունիսի 3-17-ը համերգներով հանդես կգա եվրոպական տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Նյուռնբերգում, Բեռլինում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Բաց ֆուտբոլ անձրեւի ուղեկցությամբ

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 4-րդ տուրի հանդիպումներն անցան եղանակային անբարենպաստ պայմաններում: Ցնայած դրան, տուրն աչքի ընկավ ընթացիկ առաջնության համար ռեկորդային արդյունավետությամբ. խփվեց 17 գոլ:

Տուրի կենտրոնական հանդիպումը «Բանանցի» եւ «Փյունիկի» մրցավեճն էր, որն աչքի ընկավ գոլերի առատությամբ: Արդեն 6-րդ րոպեին Արտակ Դաբյանն առաջ մղեց «Բանանցին»: Սակայն 10 րոպե անց Գեւորգ Ղազարյանը վերականգնեց հավասարակշռությունը: Մինչեւ ընդմիջում մրցակիցները եւս մեկական գնդակ փոխանակեցին: Աչքի ընկան Բրունո Կորեան եւ Հովհաննես Հովհաննիսյանը:

Ընդմիջումից հետո Արտակ Ալեքսանյանն այս խաղում առաջին անգամ առաջ մղեց «Փյունիկին»: 79-րդ րոպեին չափազանց տպավորիչ գոլի հեղինակ դարձավ «Բանանցի» հարձակվող Արսեն Բալաբեկյանը՝ տուգանային հարվածով հավասարեցնելով հաշիվը (3-3): Թվում էր, թե խաղը կավարտվի ոչ-ոքի, սակայն 85-րդ րոպեին Սարգիս Հովսեփյանի հեռահար փոխանցումից հետո Գեւորգ Ղազարյանը մենամենակ հայտնվեց դարպասապահի դիմաց ու խփեց հաղթական գնդակը:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Վարդան Մինասյան («Փյունիկ»)-Խաղն իր բնույթով մոտ էր եվրոպական խաղադաշտերում ընթացող մրցավեճերին: Երկու թիմերն էլ հաղթանակի հասնելու մեծ վճռականություն դրսեւորեցին: Այսօր մարզական բախտը մեր կողմն էր, քանի որ «Բանանցն» ավելացված ժամանակում կարող էր փրկել խաղը: Մարկոսը վնասվածք ուներ, ուստի նախապես ծրագրել էինք, որ նա մեկ խաղակես պետք է խաղա: Արտակ Եդիգարյանն էլ վնասվածքի պատճառով չմասնակցեց հանդիպմանը:

Ստեփիցա Կուզմանովսկի («Բանանց»)- Այսօրվա խաղը շատ հետաքրքրական էր ու գոլերով հարուստ: Պաշտպանությունում երկու թիմերն էլ բազմաթիվ սխալներ գործեցին: Մեր թիմում դրանք ավելի շատ էին: Հաղթելու հնարավորություն ունեինք, բայց չօգտագործեցինք գոլային պահերը: Եթե 2-1 հաշվի ժամանակ Բալաբեկյանը 3-րդ գոլը խփեր, խաղն այլ ընթացք կունենար: 3-3 հաշվի ժամանակ էլ Արթուր Հակոբյանը չօգտագործեց գոլային պահը: Իսկ ահա փյունիկցիներն օգտագործեցին իրենց պահն ու հաշվի մեջ առաջ անցան: Մեր պաշտպանները շատ վատ խաղացին, նրանց մոտ կարեւոր պահերին բացակայում էր կենտրոնացումը: Պետք է աշխատենք վերացնել թերությունները պաշտպանությունում:

Հաղթարշավն է շարունակում «Ուլիսը», որը հերթական հաղթանակը տոնեց Իջեւանում «Շիրակի» նկատմամբ: Ընդամենը 4 or առաջ նույն մարզադաշտում «Ուլիսը» գավաթի կիսաեզրափակիչի առաջին խաղում 1-0 հաշվով խաղի ավելացված ժամանակում խփած գոլի շնորհիվ հաղթել էր գյումրեցիներին: Առաջնության խաղում «Ուլիսը» վստահ հաղթանակ տոնեց 3-1 հաշվով: Առաջին խաղակեսում ուլիսցի Գեորգի Կրասովսկին 2 անգամ գլխի հարվածով գրավեց «Շիրակի» դարպասը: Թեեւ Կարեն Խաչատրյանը կրճատեց հաշիվը, սակայն ընդմիջումից հետո Վալերի Ալեքսանյանը 3-րդ գոլը խփեց:

«Միկան» սեփական հարկի տակ 3-2 հաշվով առավելության հասավ «Իմպուլսի» նկատմամբ: 14-րդ րոպեին հաշիվը բացեց «Միկայի» նորեկ Կոնստանտին Մանդրիչենկոն: Մինչեւ ընդմիջում Աղվան Հայրապետյանը վերականգնեց հավասարակշռությունը: Ընդմիջումից հետո Զավեն Բաղդասարյանը առաջ մղեց «Իմպուլսին»: Սակայն «Միկան» իր մեջ ուժ գտավ բեկում մտցնելու մրցակցությունում: Նարեկ Բեգլարյանի եւ Ալեքսի խփած գոլերի շնորհիվ «Միկան» շահեց մրցավեճը:

3-րդ անընդմեջ պարտությունը կրեց «Արարատը»՝ սեփական հարկի տակ զիջելով «Գանձասարին»: Հանդիպման ելքը վճռեց Վլադիմիր Մատիչի խփած միակ գոլը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուլիս	4	3	1	0	7-2	10
2. Միկա	4	2	2	0	6-2	8
3. Գանձասար	4	2	2	0	3-1	8
4. Փյունիկ	4	2	1	1	6-5	7
5. Շիրակ	4	1	1	2	3-5	4
6. Իմպուլս	4	1	0	3	5-6	3
7. Բանանց	4	0	2	2	5-8	2
8. Արարատ	4	0	1	3	1-7	1

Ռմբարկուները

Գեորգի Կրասովսկի	«Ուլիս»	3
Գեւորգ Ղազարյան	«Փյունիկ»	2
Արթուր Քոչարյան	«Գանձասար»	2
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	2
Արտյոմ Ադամյան	«Ուլիս»	2
Բրունո Կորեա	«Բանանց»	2
Զավեն Բաղդասարյան	«Իմպուլս»	2

Խորեն Գեւորը որակազրկվեց ու հարձակվեց մրցավարի վրա

Պրոֆեսիոնալ բոնցֆամարտում աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու Խորեն Գեւորի 4-րդ փորձն էլ անհաջողության մատնվեց: Մագդեբուրգում նա մրցեց երկրորդ միջին-քաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցի հետ:

Երկու բոնցֆամարտիկներն էլ ակտիվ մենամարտ վարեցին, միմյանց հարվածներ հասցրին, սակայն մրցավարների կարծիքով աշխարհի չեմպիոնն ավելի դիպուկ էր: 3-րդ ռաունդում հերթական հարվածից հետո Գեւորը ձախ աչքի վերին մասում պատռվածք ստացավ: 10-րդ ռաունդում ռինգում կրքերը բորբոքվեցին: Երկու բոնցֆամարտիկները երբեմն դիմում էին անթույլատրելի հարվածների: Այն բանից հետո, երբ ռինգի մրցավար Մանֆրեդ Կյոխլերը 1 միավոր հանեց Խորենից, հայ բոնցֆամարտիկը կտրուկ գրոհի դիմեց, որի արդյունքում երկու մրցակիցները հայտնվեցին ռինգի հատակին: Երբ բոնցֆամարտիկները վեր կացան, պարզվեց, որ Շտիգլիցի աջ աչքի շրջակայքում պատռվածք է առաջացել: Համարելով, որ Խորեն Գեւորն անթույլատրելի հարված է կատարել մրցակցին, ռինգի մրցավարը դադարեցրեց մենամարտն ու որակազրկեց հայ բոնցֆամարտիկին:

Այդ որոշումը վերջնականապես Գեւորին հանեց հավասարակշռությունից եւ նա հարձակվելով մրցավարի վրա, նրան մի քանի անգամ հարվածեց: Վրա հասած անվտանգության աշխատակիցները Խորենին դուրս բերեցին ռինգից:

Միջադեպի առիթով Շտիգլիցի մարզիչ Դիրկ Ջեմսկին հետեւյալն է նշել. «Խորեն Գեւորը միտումնավոր գլխով հարվածեց Շտիգլիցին, որից հետո ռինգում անկարգություններ հրահրեց, որի ժամանակ մի քանի հարված էլ մրցավարին հասցրեց: Նման բոնցֆամարտիկին չպետք է թույլատրել ռինգ մտնել: Նրան հարկավոր է կարմիր քարտ ցույց տալ: Նա ցանկանում էր կեղտոտ միջոցներով հաղթել»:

Կատարվածն անակնկալ էր Շտիգլիցի համար. «Նման բան Գեւորից չէի սպասում: Չեմ հասկանում, թե նրա հետ ինչ կատարվեց: Գուցե նա հիվանդ է: Մենք որոշել էինք, որ մինչեւ 9-րդ ռաունդը ես պետք է խնայեի ուժերս, որպեսզի 10-րդ ռաունդից վճռական գործողությունների անցնեի: Բավական ուժ ունեի եւ կարող էի մինչեւ վերջ մենամարտել»:

Տեղի ունեցածի համար ափսոսանք է հայտնել եւ Գեւորի փոխարեն ներողություն է խնդրել նրա մենեջեր Պետեր Շուլցը: Իսկ Sat1 հեռուստաալիքի մեկնաբան Ակսել Շուլցն այդ մենամարտը համեմատել է Թայսոն-Հոլիֆիլդ մենամարտի հետ, երբ Թայսոնը կծել էր մրցակցի ականջը:

Հաշմանդամ լողորդների հարուստ ավարը

Ռուսաստանի Ջերժինսկ քաղաքում անցկացված հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող մարզիկների լողի բաց առաջնությունում հիանալի ելույթներ ունեցան Հայաստանի լողորդները՝ նվաճելով 8 մեդալ: Դրանցից 6-ը (1 ոսկե, 3 արծաթե, 2 բրոնզե) բաժին հասավ 15-ամյա Մարգարիտա Հովակիմյանին: Նա լրացրեց սպորտի վարպետի թեկնածուի նորմն: Նրա ցույց տված արդյունքները հնարավորություն կտան հայտ ներկայացնելու եւ մասնակցելու Բեռլինում հուլիսին կայանալիք պարոլիմպիկ լողի Եվրոպայի առաջնությանը:13-ամյա Արտակ Դավթյանը նվաճեց 2 արծաթե մեդալ:

Սմբատ Մարգարյանը չարդարացրեց սպասելիքները

Երեկ Կազանում մեկնարկած ծանրամարտի Եվրոպայի հերթական առաջնությունում Հայաստանի ծանրորդներից առաջինը մրցահարթակ դուրս եկավ 2010թ. Եվրոպայի փոխչեմպիոն Սմբատ Մարգարյանը, որից սպասելիքները մեծ էին: Տավոր 18-ամյա պատանին այս անգամ անվստահ ելույթ ունեցավ՝ երկամարտի 245 կգ (105+140) արդյունքով 12 մասնակիցների մեջ գրավելով ընդամենը 9-րդ տեղը:

Պոկում վարժությունում Սմբատը պատվիրել էր ամենացածր քաշը՝ 105 կգ: Սկիզբը հաջող էր, սակայն հաջորդ երկու մոտեցումների ժամանակ հայ ծանրորդին չհաջողվեց իրեն ենթարկել 110 կգ-անոց ծանրաձողը: Հրում վարժության համար նա պատվիրել էր բավական բարձր նախնական քաշ՝ 140 կգ: Առաջին մոտեցումը հաջող էր: Երբ բոլորն արդեն ավարտել էին մրցումները, Սմբատը մրցահարթակ դուրս եկավ բարձրացնելու 151 կգ-անոց ծանրաձողը, ինչը նրան արծաթե մեդալ կպարգեւեր: Սակայն դա նրա ուժերից վեր էր:

Եվրոպայի չեմպիոն հռչակվեց մոլդովացի Օլեգ Սիրխին՝ 262 կգ (112+150): 256 կգ արդյունքով 2-րդ տեղը գրավեց թուրք Գոկհան Կիլիցը: Նույնպիսի արդյունքով բրոնզե մեդալ նվաճեց ռումինացի Ֆլորին Կրոիտորուն:

Եվրոպայի առաջնության առաջին պարգեւները վիճարկեցին մինչեւ 48 կգ քաշային կանայք: Նրանց մրցավեճում մրցակցությունից դուրս էր թուրք Նուրկան Թայլանը, որը երկամարտում ցույց տվեց 195 կգ (90+105) արդյունք: Նա 15 կգ-ով գերազանցեց արծաթե մեդալի արժանացած իր հայրենակցուհի Նուրդան Կարագյոզին: Վերջինիս ցուցանիշը կրկնեց իտալուհի Ժենի Պագլիարոն, որն անձնական քաշով 250 գրամով ծանր էր Կարագյոզից, ուստի բավարարվեց բրոնզե մեդալով:

Հարություն Մերդինյանի աննախադեպ հաջողությունը

Բեռլինում անցկացված սպորտային մարմնամարզության Եվրոպայի անհատական առաջնությունում մեծ հաջողության հասավ Հարություն Մերդինյանը: Հանդես գալով միայն նժույգաթափում, 27-ամյա հայ մարմնամարզիկն իրեն գերազանց դրսեւորեց ու բավական թեժ պայքարում 14,95 միավորով արժանացավ բրոնզե մեդալի: Սա անկախ Հայաստանի պատմության մեջ Եվրոպայի առաջնություններում հայ մարմնամարզիկների նվաճած առաջին մեդալն է, ինչն ավելի է արժեւորում Հարությունի հաջողությունը: Այս մրցաձեւում չեմպիոնի կոչումը 15,625 միավորով նվաճեց հունգարացի Քրիստիան Բերկին: Արծաթե մեդալակիր դարձավ ֆրանսիացի Սիրիլ Թոմասոնեն (15,050):

Նշենք, որ նախնական փուլում Հարություն Մերդինյանը 94 մասնակիցների մեջ 14,9 միավորով զբաղեցրել էր 5-րդ տեղը եւ իրավունք էր ստացել մասնակցելու 8 ուժեղագույնների եզրափակիչ մրցավեճին:

Հաջող պետք է համարել նաեւ Հայաստանի 2-րդ պատվիրակի՝ 18-ամյա Արթուր Դավթյանի ելույթը: Հենացատկերում Եվրոպայի երիտասարդների չեմպիոնի տիտղոսը կրող հայ մարմնամարզիկն առաջին անգամ էր մասնակցում մեծահասակների Եվրոպայի առաջնությանը: Բազմամարտում նա վաստակեց 83,025 միավոր եւ 39 երկրների 148 մասնակիցների մեջ գրավեց 27-րդ տեղը: Բայց քանի որ եզրափակիչի ուղեգիր նվաճած 24 մասնակիցներից մի քանիսը վնասվածքի պատճառով չէին կարող շարունակել պայքարը մեդալների համար, ուստի Արթուրն իրավունք ստացավ մասնակցելու ուժեղագույնների մրցավեճին: Այստեղ եւս նա իրեն լավ դրսեւորեց՝ 84,35 միավորով զբաղեցնելով 20-րդ տեղը բազմամարտում: Նա հենացատկերում եւ օղակների վրա վարժությունում գրավեց 11-րդ հորիզոնականը:

Չափարյանն ու Կարապետյանը Եվրոպայի գավաթակիրներ

Հունաստանում անցկացված երիտասարդների ձյուդոյի Եվրոպայի գավաթի խաղարկությունում հաջող մրցելույթներ ունեցան հայ ձյուդոյիստները: Մրցաշարին մասնակցած հայ 9 ձյուդոյիստներից երկուսն արժանացան ոսկե մեդալի՝ դառնալով Եվրոպայի գավաթակիր: Գերազանց հանդես եկավ 73 կգ քաշային Անդրանիկ Չափարյանը, որը շահեց բոլոր 5 գոտեմարտերն էլ: Եզրափակիչում նա պարտության մատնեց լեհ Պետեր Պլյոնսկուն: Աղջիկների մրցավեճում էլ մինչեւ 48 կգ քաշային կարգում Եվրոպայի գավաթը նվաճեց Երջանիկ Կարապետյանը: Նա վճռորոշ գոտեմարտում հաղթեց բուլղարուհի Յոհաննա Դամյանովային:

Մրցանակակիր կարող էին դառնալ նաեւ 60 կգ քաշային Արսեն Թովմասյանն ու գերծանրքաշային Ազատ Աբրահամյանը: Սակայն բրոնզե մեդալների համար պայքարում նրանք պարտվեցին համապատասխանաբար վրացիներ Լաշա Մարգենաշվիլուն եւ Ուշանգի Կոկաուրիին: 55 կգ քաշային Գարիկ Հարությունյանն էլ տեղ գրավեց լավագույն ութնյակում:

Հայ շախմատիստների հաղթական մեկնարկը

Շախմատի Դուբայի մրցաշարին մասնակցող հայաստանցի 10 շախմատիստներից 9 մեկնարկային տուրում հաղթեցին: Վլադիմիր Հակոբյանը, որ անհատական վարկանիշով (2675) զիջում է միայն հնդիկ գրոսմայստեր Կրիշնան Սասիկիրանին (2682), սեւերով հաղթեց Սայանթան Դասին: Զավեն Անդրեասյանը պարտության մատնեց Վերոնիկա Շնեյդերին, Սամվել Տեր-Սահակյանն առավելության հասավ Զոն Բենեթի նկատմամբ, Տիգրան Քոթանջյանը հաղթեց Ամրո Զավիշին:

Արտաշես Մինասյանն էլ Պաուլ Դուրգանի հետ պարտիայում հաջողության հասավ: Իր օգտին հաղթական միավոր գրանցեց նաեւ Դավիթ Պետրոսյանը Ռոչի Պաբալանի հետ պարտիայում: Գեւորգ Հարությունյանն ու Կարեն Գրիգորյանն էլ հաղթեցին համապատասխանաբար Ռոբերտ Արելանոյին եւ Մանոդիոր Դիարին: Հովիկ Հայրապետյանը պարտության մատնեց Էսա Ալ Զարոնիին: Միակ ոչ-ոքի արդյունքը գրանցվեց Ատոմ Անասասյանի եւ Սարասադաթ Խադեմալշարիեթի մրցավեճում: Հաջող մեկնարկեց նաեւ Վրաստանը ներկայացնող Դավիթ Հարությունյանը՝ հաղթելով Ֆրանսիս Դիմարուկոթին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

«Հայռուսգազարդը» Մայր Թերեզան չէ, բայց բոբո էլ չէ»

Սակագինը հսակ է, տեխնիկապես անհնար է գազին օդ խառնել

Սպառողների միության նախագահ **Արմեն Պողոսյանի** գնահատմամբ՝ տարին գազի գնի բարձրացման առումով բարեհաջող էր: Թեպետ միջպետական ակտիվ հարաբերությունների շնորհիվ գազի սակագինը չբարձրացավ, սակայն եղած սակագինն էլ հասարակ աշխատավարձով ապրող խաղաղացին դժվարությամբ է վճարում: «Մեր սպառողական զամբյուղն ունի հիպերտրոֆիկ վիճակ՝ սննդի համար ծախսվում է եկամուտների 57 տոկոսը, կոմունալ ծառայությունների համար՝ 28.8 տոկոս: Եվրոպական չափանիշներով վերոնշյալ ցուցանիշը բնութագրվում է աղքատության ծայրահեղ վիճակ: Այս տարի գազի գինը չթանկացավ, բայց մյուս տարի էլ է ապրիլի մեկ լինելու: Սա կարկտային տնտեսական խաղաթափանություն է, ինչից տուժում է միայն հասարակ խաղաղացին», «Հայելի»-ում նշում է Արմեն Պողոսյանը:

Գազի գնի վերաբերյալ երկրում մենաշնորհային իրավիճակ է տիրում: Եթե դաշտում մեկ ուրիշ ընկերություն հայտնվի, որ մատակարարման որոշ հատվածը վերցնի իր վրա, ապա կառաջանա մրցակցություն, եւ գազի գները կիջնեն: Սակայն դեռ դաշտում մենաշնորհում է «Հայռուսգազարդը»: Պարսկաստանի հետ գազի հսակ սակագին չկա: Որոշակի ֆանակությամբ էլեկտրաէներգիայի համար ստանում ենք համապատասխան ծավալի գազ:

ՀՀԿ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Վարդան Այվազյանը** բացառում է , որ «Հայռուսգազարդ» ընկերությունը գերշահույթ է ստանում: «Գազի գնի ձեւավորումը հսակ է, եւ այստեղ վիճելի խնդիրներ չկան: «Հայռուսգազարդը» Մայր Թերեզան չէ, բայց բոբո էլ չէ»:

Տնտեսագետ **Աշոտ Թավադյանի** մեկնաբանությամբ՝ Հայաստանին վաճառվող գազի գինն էապես զիջում է այլ երկրների գազի գնին: Եթե համեմատենք Մոլդովայի կամ Ռումինիայի հետ, Հայաստան գազը շատ ավելի ցածր գնով է մտնում:

Հայաստանում գազի սակագինը հազար խորանարդ մետրի համար արժե 270 եվրո, իսկ Մոլդովայում՝ 300 եվրո: «Հայաստանում գազը ներկրվում է հազ. խմ-ն 180 դոլարով, ԱԱՀ-ն կազմում է 47.3 դոլար, կորուստները՝ 11 %, մարժան՝ 16 % կամ 45 դոլար: Դա նորմալ է: Բայց եթե համեմատենք գազի գինն արդեն մեկ շնչի համար, այս առումով լուրջ խնդիրներ ունենք: Մեկ շնչին ընկնող գազի ծախսը 2800 դրամ է, սպառողական զամբյուղի 45.000 դրամի պարագայում դա գուցե բավարար է, մինչդեռ միջինը 28.000 դրամ թոշակի հետ համեմատած՝ գազի սակագինը լուրջ խնդիր է»:

Թավադյանը համոզված է, որ սոցիալական խմբերի համար առանձին գին նշանակելը հարցի լուծում չէ: Հետեւաբար պետության խնդիրը պետք է լինի ոչ թե կրճատել գազի գինը, այլ միջոցներ ձեռնարկելու, որ այն չբարձրանա:

Որ հասարակության մեջ գազի սակագինը խուճապ է առաջացրել՝ բնական է. գնաճը կազմել է 9.6 տոկոս: Առաջին անհրաժեշտության ապրանքներ գնելու համար հսկայական խնդիրներ են առաջացել:

«Գազի սակագնի վերաբերյալ ամեն ինչ հսակ է, պարզապես պետք է մտածել՝ ինչպես լուծել սոցիալական հարցերը, որպեսզի խաղաղացիները կարողանան վճարել»:

ԱԺ տնտեսական հարցերով հանձնաժողովում ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրելու է գազի սպասարկման անվտանգության ու կալորիականության ապահովումը: Այս առումով կան լուրջ խնդիրներ: «5.700 դրամ են գանձում, սակայն սպասարկում չեն մատուցում: Հակառակ կողմն ասում է, որ եթե չվճարես՝ գազամատակարարումը կանջատեմ, սակայն նա օգտագործած գազի համար արդեն վճարել է: Այս հարցը պետք է քննարկվի»:

Որ գազին օդ են խառնում, Վարդան Այվազյանը բացառում է. «Տեխնիկապես անհնար է, որ գազին օդ խառնվի»: Հայ հեղափոխական դաշնակցությունը խորհրդարանում լսումներ է կազմակերպել գազի գնի վերաբերյալ: Վարդան Այվազյանի գնահատմամբ՝ քայլը քաղաքական ուղղվածություն ունի. «Նպատակն է դիվիդենտներ շահել, ուրիշ ոչինչ»:

Հ. Հ.

ԱՄՆ պետքարտուղարությունում էլ արտգրելը ընդունելի՞ է

1-ին էջից

Մինչդեռ 2010-ին որոշակի առաջընթաց է եղել ղարաբաղյան հարցում, ընդ որում, ամենաբարձր մակարդակով հայտարարությունների տեսքով էլ, որոնցում չկան անգամ այդպիսի ձեւակերպումներ հիշեցնող մտքեր:

Ստացվում է, որ այն, ինչը ստորագրում է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հենց ղարաբաղյան հարցի առնչությամբ, կարող է բացարձակապես այլ լինել, քան այն, ինչ հարմար են գտել օգտագործել ԱՄՆ պետքարտուղարության մարդու իրավունքների ջատագովները, որոնք թեմային առնչվող դատողությունների ու գնահատականների կողքին ներկայացրել են ձեւակերպումներ, որոնց «իրավաբանությունը» խիստ կասկածելի է:

Օրինակ, կանադական Մուսկոկայում 2010-ի հունիսի 26-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ նախագահները հայտարարություն ստորագրեցին, որտեղ ոչ միայն չկային այսօրինակ ձեւակերպումներ, այլեւ որեւէ կերպ չի նշվել Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի տարածաշրջան: Թեեւ այդ հայտարարության մեջ կիրառվել է օկուպացված տերմինը, սակայն դա վերաբերել է ոչ թե Լեռնային Ղարաբաղին, այլ հարակից տարածքներին:

Նմանապես Աստանայի հնգակողմ հայտարարությունը՝ համանախագահող երկրների ներկայացուցիչների ու Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների ստորագրությամբ որեւէ նման ձեւակերպմամբ չի մատուցվել, այլ ընդգծմամբ, որ հավասարազոր ու որեւէ կերպ գերակայությամբ չներկայացվող պետք է ընկալվեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման երեք հիմնական սկզբունքները՝ ուժի չկիրառումը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականության սկզբունքը:

Ամեն դեպքում, «անջատողականների» հատվածը զեկույցում շարունակվում է հետեւյալ կերպ. «Ադրբեջանի հետ սահմանի ու շփման գծի երկայնքով տեղադրված ականները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում շարունակում են մարդնական վնասվածքներ պատճառել»: «Պաշտոնական տեղեկության համաձայն, տարվա ընթացքում շփման գծի երկայնքով տեղի ունեցած հրաձգություններն ավարտվել են դժբախտ դեպքերով՝ ներառյալ հայկական կողմի զինվորականներից 11 զոհերն ու 34 վիրավորները», նշված է զեկույցում:

Ադրբեջանին վերաբերող զեկույցում «անջատողականների» հատվածը կրկնված է նույնությամբ, մի տարբերությամբ, որ 2010-ին տեղի ունեցած շփման գծի միջադեպերի մասին տվյալներ չեն ներկայացվում: Եվ սա այն դեպքում, երբ «Հայաստանի աջակցությամբ» են վերահսկվում «ադրբեջանական տարածքները», ականապատման ու դրան ավելացած, նաեւ զինադադարի խախտումների մասին հիշատակումն անհասցե է, որեւէ պարագայում չանդրադառնալով Ադրբեջանի ռազմական հռետորաբանությանն ու հայտարարություններին:

Տրավորությունը այնպիսին է, թե ԱՄՆ պետքարտուղարության զեկույցի պատրաստումը վստահել են կամ ադրբեջանցու, կամ էլ այնպիսի մեկին, որն աշխատանքն անելու մեջ իր թերացումներն արտահայտել է մի երկրի զեկույցից մյուս երկրի զեկույցում արտատպումներ անելով, ընդ որում, նախապես տեքստը գրել է Ալիեւ կրտսերից ավելի ադրբեջանցի մեկը:

Թեֆեյան մշակութային միության ամենամյա մրցանակաբաշխություն

«Վահան Թեֆեյան» ամենամյա մրցանակաբաշխման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 18-ին, երկուշաբթի օրը, ժամը 15.00-ին, Թեֆեյան կենտրոնի (Խանջյան 50) մեծ դահլիճում:

Գրականության, երաժշտության, նկարչության, թատրոնի, խաղաթափական երգիծանքի, հեռուստատեսության, մանկական ծրագրերի եւ «**Ազգ**» օրաթերթի հրապարակումների համար տրվող մրցանակների հանձնման արարողությանը կուղեկցի գեղարվեստական ծրագիր:

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

Բաց նամակ քաղաքապետին

Բազմաթիվ դիմումներ եմ գրել իմ տան նոր սեփականաշնորհման եւ հողատարածքի համար, որի նկատմամբ ապօրինի գործունեություններ կան Ձեր եւ ճարտարապետական բաժնի աշխատակիցների կողմից.

բանալիներ՝	258528	21.04.2010	ՀՀ նախագահի աշխատակազմից
	261374	05.05.2010	2010 թ. 09. 18 թիվ 20.7797
	284314	16.09.2010	2010 թ. 11. 05 թիվ 20.9342
	284813	22.09.2010	
	296439	02.12.2010	
	297076	06.12.2010	
	311003	09.03.2011	

Շնորհակալություն ՀՀ ոստիկանապետ Ա. Սարգսյանին եւ իր աշխատակիցներին գործին ճիշտ ուղղություն տալու համար

Խնդեմեր, դասախոս
այժմ կենսաթոշակառու
Մ.Գ. Աղաբաբյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարվում է պարզեցված ընթացակարգով մրցույթ:

Գնման առարկա է հանդիսանում «Հեռուստածրագրերի հեռարձակման ծառայություններ»-ը:

Լրացուցիչ ինֆորմացիա ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայք:

Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում

www. azg.am

Դիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում եւ վերջինիս միջոցով իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք հետաքրքրված սակարկություններով՝

-Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 236.3 քմ ներքին եւ 261.6 քմ արտաքին, 0,031 հա հողամաս, 9,4 քմ թաղնանոցի, 5,0 քմ պարիսպ: Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ոսկեհաս, Անդրանիկի փող., 23: Մեկն. գինը՝ 8000000 դրամ:

-Բնակարան, ընդ. մակերեսը՝ 90,2 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Արմավիր, Բաղրամյան 10 շենք, բն.22: Մեկն. գինը՝ 7300000 դրամ:

-Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 102,07 քմ, 0,117 հա հողամաս, 3,75 քմ կաթսայատան: Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, գ. Բերդավան: Մեկն. գինը՝ 1600000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում, 13.05.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. ափ. or ժ.11.00 - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. or ժամը 11.00 – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայական պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնման առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

Ձեւ N1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01. 01. 2011 թ.
(ամսաթիվ, ամիս, տարի)

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«Էնջլ ընդ Ար-Նար» ՍՊԸ	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	ՇԽ-կազմակերպում	
		ՇԽ-169
Պետական ռեգիստրում գրանցման համարը		29011003697
Հարկ վճարողի հաշվառման համարը		01843538
Ցափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երեւան, Ն. Շենգավիթ 11 փ., 39/1 շ., բն. 18	
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ Արարատի մարզ, գ. Արգավանդ Ծով. Իսակովի փ. թիվ 4 խանութի մաս	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	1307	995
Ոչ նյութական ակտիվներ	030	3333	3333
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	4640	4328
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	11	11
Այլ դեբիտորական պարտքեր	180	5	
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	95	150
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	1000	7000
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	1111	7161
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	5751	11489

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50	50
Կուտակված շահույթ	270	5700	10662
Ընդամենը սեփական կապիտալ	300	5750	10712
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	1	440
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	-	144
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	-	169
Այլ կրեդիտորական պարտքեր	450	-	24
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	1	777
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	5751	11489

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2010 թ.
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամոդական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամոդական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	49,915	51,169
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(36,759)	(36,791)
Համախառն շահույթ (վնաս)	030	13,156	14,378
Վարչական ծախսեր	050	(8,292)	(9,416)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	4,864	4,962
Գործառնական շահույթ (վնաս)	090	4,864	4,962
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	3	-
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	4,867	4,962
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	4,867	4,962
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	(1)	-
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	4,866	4,962

Ղեկավար *Ա. Սարգսյան*
Գլխավոր հաշվապահ *Վ. Սիմոնյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԷԿՈՆՈՄԻԿՍ-ԱՈՒԴԻՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա ԱԾ N 085
Տրված 15.12.2010 թ. ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից
378240, ք. Երեւան, Խանջյան-47/8
Հեռ. (Tel) Բջջ. (091) 46-19-42, (010) 61-16-32

«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ տնօրեն/աուդիտոր *Հ. Դանիելյան*
(աուդիտորի որակավորման վկայական թիվ 068)

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեթիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: